

Համառոտ գեկույց.
իրավահեն կլիմայական
հարմարվողականությունը
Հայաստանում և Վրաստանում



Համառոտ գեկույց. իրավահեն կլիմայական հարմարվողականությունը Հայաստանում և Վրաստանում

Մեթյու Սքոթ¹ և Մո Համզա²

Copyright: Մեթյու Սքոթ և Մո Համզա

Publication design by RWI.

Այս հետազոտության մեջ արտահայտված տեսակետներն ու կարծիքները
հեղինակներին են և պարտադիր չէ, որ արտացոլեն RWI-ի կամ Լոնդոնի համալսարանի
տեսակետները

Supported by:  Swedish
Institute

¹ Ռաուլ Վալենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտ

² Լոնդոնի համալսարան, ճարտարագիտական ֆակուլտետ, ռիսկերի կառավարման և հասարակական
անվտանգության ամբիոն

Համառոտ գեկույց.

իրավահեն կլիմայական հարմարվողականությունը

Հայաստանում և Վրաստանում

1	Ներածություն.....	1
2	Մարդու իրավունքների և գենդերային հավասարության ինտեգրման շրջանակային մեթոդաբանություն. իրավահեն և գենդերային հավասարության վրա հիմնված մոտեցում.....	2
2.1	Ազդեցություն, խոցելիություն և կարողություններ.....	4
2.2	Հիմնարար իրավունքներ և հավասարություն.....	6
2.3	Տեղեկատվության հասանելիություն, հանրության մասնակցություն և արդարադատության մատչելիություն.....	8
2.4	Կառավարման համակարգեր և ենթակառուցվածքներ.....	10
3	Համադրություն.....	15
3.1	Բնակարանային իրավունքը Վրաստանում.....	16
3.1.1	Տեղահանման կանխարգելում.....	19
3.1.2	Պաշտպանություն տեղահանման ընթացքում.....	20
3.1.3	Երկարաժամկետ լուծումներ.....	21
3.2	Ջրի իրավունքը Հայաստանում.....	22
3.2.1	Ջրի հասանելիություն և մատչելիություն.....	23
3.2.2	Ջրի որակը.....	25
3.3	Տեղեկատվության հասանելիություն, մասնակցություն և արդարադատության մատչելիություն.....	26
3.4	Կառավարման համակարգեր և մարմիններ.....	28
3.5	Առաջարկություններ.....	29
4	Եզրակացություն. Փոփոխության տեսություն.....	30
5	Հավելված 1. Հայաստանի վերաբերյալ գեկույցի առաջարկություններ.....	34
5.1	Հասանելիություն, մատչելիություն, որակ.....	35
5.2	Տեղեկատվության հասանելիություն, հանրության մասնակցություն և արդարադատության մատչելիություն.....	36
5.3	Կառավարման համակարգեր և մարմիններ.....	38
6	Հավելված 2. Վրաստանի գեկույցի վերաբերյալ առաջարկություններ.....	40
6.1	Ընդհանուր քաղաքականության մշակում.....	40

6.2	Տարածաշրջանային առանձնահատկություններ	41
6.3	Բնակեցիություն	42
6.4	Ծառայությունների, նյութերի, կառույցների և ենթակառուցվածքների մատչելիություն	42

1 Ներածություն

Այս համառոտ զեկույցում ներկայացվում է Շվեդիայի ինստիտուտի կողմից ֆինանսավորվող «Իրավահեն կլիմայական հարմարվողականությունը Հայաստանում և Վրաստանում» նորարական ծրագրի ամփոփ նկարագրությունը: Այն ներառում է Մարդու իրավունքների և գենդերային հավասարության ինտեգրման շրջանակային մեթոդաբանության (FIRE) մանրամասն նկարագրությունը՝ ներկայացնելով նախագծի կառուցվածքը և բովանդակությունը: Զեկույցում նաև ամփոփված են պետական հաշվետվություններից ստացված հիմնական դիտարկումները Հայաստանում ջրի սակավության և Վրաստանում ջրհեղեղների ռիսկի վերաբերյալ: Եզրափակիչ բաժինը անդրադառնում է համատեղ ուսուցման և փորձի փոխանակման հնարավորություններին՝ ուղղված կլիմայական հարմարվողականության և համամոլորակային եռակի ճգնաժամի հաղթահարման իրավահեն ավելի լայն գործողություններին:

«Իրավահեն կլիմայական հարմարվողականությունը Հայաստանում և Վրաստանում» ծրագիրը մշակվել է պետական մարմինների մասնագետներին աջակցելու նպատակով՝ կլիմայի փոփոխությունների հետ կապված մարտահրավերների դիմակայման և իրենց երկրներում իրականացվող հարմարվողականության նախագծերի բարելավման նպատակով: Կլիմայի փոփոխությունների դեմ ուղղված պայքարի միջոցառումներ իրականացնելիս նախաձեռնությունը առաջնորդվում է Փարիզի համաձայնագրի շրջանակներում կողմերին ուղղված կոչով:

հարգել, խթանել և հաշվի առնել մարդու իրավունքները, առողջության իրավունքը, բնիկ ժողովուրդների, տեղական համայնքների, միգրանտների, երեխաների, հաշմանդամություն ունեցող և խոցելի խմբերի անձանց իրավունքները, ինչպես նաև զարգացման գենդերային հավասարության իրավունքը, կանանց լիազորությունների և միջսերնդային հավասարության ընդլայնման պարտավորությունները:

2024 թվականի հոկտեմբերից մինչև 2025 թվականի օգոստոսը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, Մարդու իրավունքների ազգային ինստիտուտի (Վրաստան) և պետական համալսարանների (Հայաստան) ներկայացուցիչները նպաստեցին Լուռնի համալսարանի և Ռաուլ Վալենբերգի մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի կողմից կազմակերպված համատեղ ուսուցման և փորձի փոխանակման գործընթացին: Մասնակիցները 2024 թվականի հոկտեմբերին հանդիպում ունեցան Դիլիջանում՝ (Հայաստան) կայացած բացման արարողության, իսկ 2025 թվականի մարտին՝ Բորժոմիում (Վրաստան) կայացած միջանկյալ միջոցառման ժամանակ:

Դիլիջանում կայանալիք մեկնարկային միջոցառումից առաջ երկու երկրների թիմերը, կիսվելով ինստիտուցիոնալ առաջնահերթություններով, որոշեցին իրավահեն կլիմայական հարմարվողականության ուսումնասիրության առաջնահերթության հարցերը: Այնուհետև թիմերը կազմեցին իրենց երկրների վերաբերյալ զեկույցներ՝ կիրառելով սեփական փորձն ու համատեղ գիտելիքները: Հայաստանի թիմը որոշեց կենտրոնանալ ջրի սակավության վրա և հետագայում ներկայացրեց նախագիծ ջրի իրավունքի վերաբերյալ: Իսկ Վրաստանի թիմը որոշեց կենտրոնանալ ջրհեղեղի ռիսկի վրա և որպես նախագծի առաջնահերթություն սահմանեց կեցության իրավունքը:

Անմիջական հանդիպումների միջև ընկած ժամանակահատվածում մասնակիցները ամիսը մեկ անգամ առցանց հանդիպումներ ունեցան Լունդի համալսարանի և Ռաուլ Վալենբերգի մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի մասնագետների (կոորդինատորների) հետ՝ իրենց համատեղ նախագծի ընթացքը քննարկելու նպատակով: Միջանկյալ քննարկումից հետո ուշադրությունը սևեռվեց երկու երկրների զեկույցների կատարելագործման և մտքերը գործնական քայլերի վերածելու հնարավորությունների ուսումնասիրման վրա:

2 Մարդու իրավունքների և գենդերային հավասարության ինտեգրման

շրջանակային մեթոդաբանություն. իրավահեն և գենդերային հավասարության վրա հիմնված մոտեցում

2015 թվականից հետո Մարդու իրավունքները և գենդերային հավասարությունը զարգացման օրակարգի հիմնարար սկզբունքներն են, ինչպես արտացոլված է Փարիզի համաձայնագրում, Ադետների ռիսկի նվազեցման Սենդայի շրջանակում, Նոր քաղաքային օրակարգում և Կայուն զարգացման 2030 թվականի օրակարգում: Այնուամենայնիվ, որպեսզի այս սկզբունքները ոգեշնչեն մոլորակային եռակի ճգնաժամի հաղթահարմամբ զբաղվող տարբեր դերակատարներին, անհրաժեշտ է միջազգայինից մինչև ազգային մակարդակներում՝ կառավարության, քաղաքացիական հասարակության, ակադեմիական և մասնավոր հատվածի շրջանում կիրառելի համակարգված, միևնույն ժամանակ բազմակողմանի մոտեցում: Ռաուլ Վալենբերգի ինստիտուտի, Ադետների պատրաստվածության Ասիական կենտրոնի, Ստոկհոլմի շրջակա միջավայրի ինստիտուտի և Շվեդիայի արտակարգ իրավիճակների քաղաքացիական պլանավորման գործակալության կողմից համատեղ մշակված «Կայունության զարգացում Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում ադետների ռիսկի նվազեցման և կլիմայական հարմարվողականության ծրագրի միջոցով» ծրագրի (2018-2022 թթ.) **շրջանակներում** Մարդու իրավունքների և գենդերային հավասարության ինտեգրման շրջանակային մեթոդաբանությունը կիրառվել է մի շարք համատեքստերում, այդ թվում՝ Նեպալում և Ֆիլիպիններում հողօգտագործման

պլանավորմանը վերաբերող օրենսդրության և քաղաքականության վերլուծության, Ասիայի ինը երկրների քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և կառավարությունների միջև եզակի համագործակցության շրջանակներում արտակարգ իրավիճակներին պատրաստվածության իրավահեն և ներառական մոտեցումների վերաբերյալ համատեղ վերապատրաստումների անցկացման, ինչպես նաև COVID-19 համավարակի ընթացքում աշխարհի 14 երկրներում համավարակի ժամանակ պատրաստվածության և արձագանքման վերաբերյալ հետազոտությունների նախագծման նպատակով՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի հետ համագործակցությամբ: Մարդու իրավունքների և գենդերային հավասարության ինտեգրման շրջանակային մեթոդաբանությունն ավելի վաղ նաև կիրառվել է աֆրիկյան քաղաքներում կլիմայական փոփոխությունների հետ կապված բնակչության տեղաշարժի վերաբերյալ պետական նորարարական ծրագրի կազմման ժամանակ: «Իրավահեն կլիմայական հարմարվողականությունը Հայաստանում և Վրաստանում» ծրագիրը վերջին նախաձեռնությունն է և օգնել է ավելի կատարելագործել **շրջանակը**:

Շրջանակը կատարելագործվել է՝ սկզբնական վեց չափորոշիչներից կրճատվելով մինչև ներկայիս չորսը, ներառյալ՝

- ազդեցություն, խոցելիություն և կարողություններ,
- հիմնարար իրավունքներ և հավասարություն,
- տեղեկատվության հասանելիություն, հանրային մասնակցություն և արդարադատության մատչելիություն,
- կառավարման համակարգեր և մարմիններ:

Այս չորս չափորոշիչները և դրանց բազմաթիվ ուղեկցող տարրերը արտացոլում են գենդերային հավասարության սկզբունքների և աղետների ռիսկի նվազեցման, կլիմայական հարմարվողականության, կենսաբազմազանության և առողջ էկոհամակարգերի խթանման վերաբերյալ մարդու իրավունքների վրա հիմնված միջազգային հիմնական չափորոշիչների և օրենքների համակարգված ամրապնդումը: Նկար 1-ը պատկերում է Մարդու իրավունքների և գենդերային հավասարության ինտեգրման շրջանակային մեթոդաբանությունը: Հետագայում չորս չափորոշիչները կներկայացվեն հերթով: Օժանդակ հասկացությունները, այդ թվում՝ բազմամակարդակ, բազմաոլորտային և բազմաշահագրգիռ կողմեր, պարտավորված անձինք և իրավատերեր, ինչպես նաև հարգել, պահպանել և կատարել մոտեցումը, մշակվել են հաջորդ ենթաբաժինների տարրեր կետերում:

Framework for Integrating Rights and Equality (FIRE)



Figure 1: FIRE

2.1 Ազդեցություն, խոցելիություն և կարողություններ

Մարդու իրավունքների և գենդերային հավասարության ինտեգրման շրջանակային մեթոդաբանությունը կարևորում է մարդու միջազգային իրավունքի և ֆեմինիստական քաղաքական էկոլոգիայի փոխկապակցվածությունը: Մարդու միջազգային իրավունքը հանձնառու է խտրականության դեմ պայքարի համար, ինչպես արտացոլված է Միջազգային իրավունքի օրինագծում (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր և Քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին երկու դաշնագրերում) և խմբային պայմանագրերում, ինչպիսիք են՝ Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան: Խտրականության դեմ պայքարը պարտավորություն է, որը պահանջում է պետություններից գերծ մասլ անհիմա տարբերակված վերաբերմունքից և քայլեր ձեռնարկել խտրականության անուղղակի, ինչպես նաև համակարգային ձևերի դեմ պայքարի ուղղությամբ: Այս պարտավորությունները մանրամասն արտացոլված են մարդու իրավունքների տարածաշրջանային փաստաթղթերում, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում, ինչպես նաև առանձին երկրների սահմանադրությունների և օրենսդրության մեջ: Միջազգային և տարածաշրջանային մակարդակներում ուշադրությունը սևեռված է պետությունների պարտավորությունների վրա: Ազգային մակարդակում օրենսդրությունը հաճախ կարգավորում է նաև ոչ պետական մարմինների

ներկայացուցիչների, այդ թվում՝ գործատուների և ծառայություն մատուցողների գործունեությունը:

ՄԱԿ-ի պայմանագրային մոնիթորինգի մարմինները և հատուկ զեկուցողները մշակել են ուղեցույցներ այն մասին, թե ինչպես է խտրականության բացառման պարտավորությունը կիրառվում մոլորակային եռակի ճգնաժամի համատեքստում:³ Օրինակ՝ ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեն մշակել է փոփոխվող կլիմայական պայմաններում աղետների ռիսկի նվազեցման գենդերային ասպեկտների վերաբերյալ թիվ 37 ընդհանուր առաջարկությունը, իսկ Երեխաների իրավունքների հարցերով կոմիտեն հրապարակել է երեխաների իրավունքների և շրջակա միջավայրի վերաբերյալ ընդհանուր մեկնաբանություն №26-ը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կլիմայական փոփոխություններին: Ջեկուցողները, այդ թվում՝ կլիմայի փոփոխության հարցերով, մարդու իրավունքների և շրջակա միջավայրի հարցերով, թունանյութերի հարցերով, ներքին տեղահանված անձանց մարդու իրավունքների հարցերով, սննդի իրավունքի հարցերով, ջրի իրավունքի հարցերով և կեցության իրավունքի հարցերով հատուկ զեկուցողները, ի թիվս այլոց, պատրաստել են թեմատիկ զեկույցներ, որոնք անդրադառնում են այս համատեքստում խտրականության բացառման պարտավորությանը:⁴

Այնուամենայնիվ, քաղաքացիական հասարակության, ակադեմիական հաստատությունների և տուժած անձանց հետ լայնածավալ խորհրդակցությունների հիման վրա կազմված այս զեկույցները սովորաբար արտացոլում են մոլորակային եռակի ճգնաժամի տարբերակված փորձառության լայնածավալ, միջազգային մակարդակի ներգրավվածությունը՝ ըստ տարիքային, սեռային, էթնիկ պատկանելության և այլ չափորոշիչների: Ավելի մեծ փորձառական, ինչպես նաև տեսական խորություն են ապահովում գիտական հաշվետվությունները, որոնք հիմնված են ֆեմինիստական քաղաքական էկոլոգիայի, աղետների մարդաբանության և դրանց հետ կապված ոլորտների վրա, որոնք վերաբերում են իշխանության կողմից տարբերակված ազդեցությանը, խոցելիություններին և կարողություններին:

Քաղաքական էկոլոգիայի տեսանկյունից՝ աղետները բնական չեն, այլ առաջանում են բնական աղետների և սոցիալական պայմանների՝ ազդեցության, խոցելիության և կարողությունների փոխազդեցության արդյունքում: Ազդեցությունը վերաբերում է մարդկանց և գույքի գտնվելու վայրին, որտեղ տեղի են ունենում ջրհեղեղներ, անտառային հրդեհներ, երաշտներ և այլ վտանգներ, որոնք աղտոտում են շրջակա միջավայրը: Խոցելիությունը, ընդհանուր առմամբ, վերաբերում է այն աստիճանին, որով մարդիկ և գույքը կարող են դիմակայել վերահաս վտանգներին: Կառույցները

³ «Եռակի մոլորակային ճգնաժամ» հասկացությունը միավորում է կլիմայի փոփոխությունը, աղտոտվածությունը և կենսաբազմազանության կորուստը: Տե՛ս, օրինակ, UNEP (2024) «Նոր հորիզոններ նավարկելով. գլոբալ կանխատեսումների զեկույց մոլորակային առողջության և մարդու բարեկեցության վերաբերյալ»: <https://wedocs.unep.org/handle/20.500.11822/45890>.

⁴ Այս աշխատանքը համակարգում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների զերագույն հանձնակատարի գրասենյակը, տե՛ս <https://www.ohchr.org/en/instruments-and-mechanisms>.

խոցելի են, երբ չեն կարողանում դիմակայել ջրհեղեղներին, փոթորիկներին կամ հրդեհներին: Իրավիճակային առումով մարդիկ խոցելիություն են զգում՝ կախված սոցիալական, ֆինանսական, բնական, մարդկային և ֆիզիկական կապիտալի առկայությունից, որից նրանք կարող են օգտվել: Հետևաբար, խոցելիությունը կարող է փոխհատուցվել կարողություններով: Իրոք, FIRE մեթոդաբանության այս կարևորագույն տարրը մարդկանց՝ որպես ակտիվ սուբյեկտների ճանաչումն է, որոնց գիտելիքներն ու փորձը կարևոր են վտանգների նկատմամբ դիմադրողականությունն ձևավորելու համար: Ավելին, FIRE-ը հնարավորություններն ու լիազորությունները ճանաչում է որպես ինքնանպատակ, այսինքն՝ պետք է հետապնդվեն անկախ նախագծի որևէ կոնկրետ նպատակից:

Պետական իշխանությունից բացի, ֆեմինիստական քաղաքական էկոլոգիան գնահատում է, թե ինչպես են պատմական իրադարձությունները, սոցիալական նորմերը, ռեսուրսների նկատմամբ հասանելիությունն ու դրանց վերահսկողությունը ձևավորում մարդկանց ապրելակերպը բարդ սոցիալական էկոլոգիական համակարգերում: Այս տեսակետը ենթադրում է փոխկապակցված գործոնների քննադատական, համատեքստին հատուկ ուսումնասիրություն, որոնք որոշում են ազդեցության, խոցելիության և հնարավորությունների տարբերությունները: Միջոլորտային, հակառասիստական և ապագադոթաբար մոտեցումը չի խրախուսում արագ լուծումները, միաժամանակ ընդունելով, որ փոփոխությունները, հավանաբար, հարվածի տակ կդնեն հաստատված իշխանության դինամիկան: Տարբեր գործառնական համատեքստերը, որտեղ ներդրվում է FIRE-ը, կարող են միայն աստիճանաբար նպաստել փոփոխություններին:

«Օրակարգ 2030»-ը կոչ է անում Կայուն զարգացման նպատակներին հասնելու ուղղությամբ ձեռնարկել գործողություններ, որպեսզի «ոչ մեկ անտեսված չլինի»: Կյանքի դժվարին պայմաններում կիրառվող պրակտիկան ցույց է տալիս, որ այս մոտեցումը կարող է նպաստել տարբեր ազդեցությունների, խոցելիության և կարողությունների փոխկապակցվածությանը՝ առանց պարտադիր կերպով անդրադառնալու պատրիարքության, ռասիզմի և շահագործման արմատական պատճառներին: Թեև FIRE հայեցակարգը փոխզիջումային է, սակայն այն նախատեսված է մոլորակային եռակի ճգնաժամի լուծմանը նվիրված գործող անձանց լայն շրջանակին աջակցելու համար և հիմնված է այն գիտակցման վրա, որ շատ դեպքերում այս խնդիրների լուծման գործում որոշակի ներգրավվածությունն ավելի արժեքավոր է, քան ընդհանրապես ներգրավված չլինելը:

2.2 Հիմնարար իրավունքներ և հավասարություն

Մարդու իրավունքների միջազգային իրավունքը, որը սկիզբ է առել 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից, ստեղծել է հիմնական իրավունքների ամբողջություն, որոնք արտացոլում են միջազգային հանրության կողմից արժանապատիվ կյանքի բաղադրիչների վերաբերյալ բանակցային

կոնսենսուսը: Իրավունքը փոխկախված և փոխկապակցված է տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական և քաղաքական իրավունքների հետ և ներառում է բնակարանային ապահովության, ջրի, բոլոր ձևերի բռնություններից պաշտպանության, մշակույթի, կրթության, խոսքի ազատության և շատ այլ իրավունքներ, ներառյալ վերջերս ընդունված առողջ միջավայրի իրավունքը: Մարդու իրավունքների պայմանագրերը ներկայացնում են պաշտպանած իրավունքների ընդհանուր տեսականը: Այս աշխատանքն իրականացվում է ՄԱԿ-ի պայմանագրերի մոնիթորինգի մարմինների, ՄԱԿ-ի հատուկ զեկուցողների և միջազգային, տարածաշրջանային և ազգային դատարանների և այլ դատական մարմինների կողմից: Զեկույցի նախնական տարբերակը տրամադրվել է պայմանագրերի մոնիթորինգի մարմինների կողմից մշակված ընդհանուր մեկնաբանություններով և ընդհանուր առաջարկություններով, իսկ այս նյութից ստացված հիմնական չափորոշիչները հիմք են հանդիսանում FIRE-ի մեթոդաբանության համար: Կարևոր է, որ այս չափորոշիչները լրացվում են առավել գործառնական ուղեցույցներով, օրինակ, Միջգերատեսչական մշտական կոմիտեի կողմից մշակված, որը մարդասիրական արձագանքման դերակատարների կոնսուրցիում է: Այս ուղեցույցներում մարդու իրավունքների չափորոշիչների ինտեգրման գործառնական օրինակ են Աղետների ժամանակ անձանց պաշտպանության հիմնական սկզբունքները, որոնք մարդասիրական արձագանքը կառուցում են հիմնարար իրավունքներին համապատասխան: Հիմնական միջազգային չափորոշիչները և ուղեցույցները հասանելի են <https://rwi.lu.se/fire> կայքում:

Գործառնական առումով, իրավունքների այս ամբողջությունը, ինչպես նաև դրան առնչվող չափորոշիչներն ու ուղեցույցները, օգնում են կառուցել ազդեցության, խոցելիության և հնարավորությունների կոմպլեքս ուսումնասիրություն: Օրինակ, կեցության իրավունքի վերաբերյալ ուղեցույցն ընդգծում է տարբեր դիտանկյուններ, ինչպիսիք են գտնվելու վայրը, բնակելիությունը և սեփականության իրավունքի իրավական անվտանգությունը: Տվյալ համատեքստում, իրավունքի տարբեր դիտանկյուններից լուծման ենթակա հարցերը, ինչպիսիք են տարածաշրջանային աղետներին դիմակայումը, խոցելիության և կարողությունների գնահատումը կամ վերաբնակեցման խնդիրների պլանավորումը ապահովում են, որ չանտեսվեն կարևոր նկատառումները: Հիմնարար իրավունքների իրականացման այս մանրամասն ուսումնասիրությունը որոշակի համատեքստերում հզոր վերլուծական գործիք է, հատկապես երբ դրանք զուգակցվում են ազդեցության, խոցելիության և կարողությունների տարբերությունները հաշվի առնելու պարտավորության հետ: Այն կարող է կիրառվել տարբեր պետական և ոչ պետական ծառայողների (ազգային և տեղական ինքնակառավարման մարմիններ, քաղաքացիական հասարակություն, ակադեմիական հաստատություններ և մասնավոր հատված) կողմից՝ անկախ կամ որպես բազմակողմանի համագործակցության մաս: Ինչպես նշվեց, Հայաստանի և Վրաստանի թիմերի կողմից կազմված զեկույցները կենտրոնանում են համապատասխանաբար ջրի իրավունքի և կեցության իրավունքի վրա: Բաժին 3-ը ցույց է տալիս, թե ինչպես կարող է այս մոտեցումը օգնել կլիմայի հարմարվողականության նկատմամբ մարդկային գործոնի ուսումնասիրությանը:

Հավասարության իրավունքը, որը հստակորեն պաշտպանված է մարդու իրավունքների տարբեր միջազգային պայմանագրերով, հատկապես ընդգծվում է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայում (CEDAW), որտեղ 3-րդ հոդվածում նշվում է՝ «Մասնակից պետությունները բոլոր, մասնավորապես, քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային բնագավառներում ձեռնարկում են բոլոր համապատասխան, ներառյալ՝ օրենսդրական միջոցները, ապահովելու կանանց լիարժեք զարգացումն ու առաջադիմությունը, որպեսզի նրանց համար երաշխավորվեն տղամարդկանց հետ հավասարության հիման վրա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացումն ու դրանցից օգտվելը»:

Հավասարության ապահովման այս դրական պարտականությունը չի սահմանափակվում ուղղակի կամ համակարգային խտրականության դեմ պայքարով, այլ պետություններից պահանջում է ակտիվորեն աջակցել կանանց հաղթահարելու պատմական և ժամանակակից նորմերն ու գործելակերպերը, որոնք սահմանափակում են նրանց՝ բոլոր մարդու իրավունքներից օգտվելու կարողությունը: Իրականում, CEDAW կոնվենցիան ստեղծվել է ի պատասխան այն ըմբռնման, որ ամբողջ աշխարհում կանայք բախվում են բազմաթիվ խոչընդոտների, այդ թվում՝ բռնության, կրթության սահմանափակ հասանելիության, դեկավար պաշտոններում թերներկայացվածության և սեփականության սահմանափակ իրավունքների, որոնք հանգեցնում են մարդու իրավունքների լայնածավալ խախտումների: Հավասարության ապահովման պարտավորությունը պետություններին պարտավորեցնում է միջոցներ ձեռնարկել կանանց իրավունքների՝ որպես մարդու իրավունքների, իրականացումը խթանելու ուղղությամբ: Հավասարության ապահովման նմանատիպ պարտավորություններ սահմանված են Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայում (հոդված 5) և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայում (հոդված 5):

Գործառնական առումով, պետության կողմից հավասարության ապահովման պարտավորությունը լրացնում է գենդերային հավասարության և սոցիալական ներառման նկատմամբ տարածված մոտեցումները, որոնք բնորոշ չեն պետությունների միջազգային իրավական պարտավորություններին և ուղղակիորեն հիմնված չեն դրանց վրա:

2.3 Տեղեկատվության հասանելիություն, հանրության մասնակցություն և արդարադատության մատչելիություն

Այս երեք տարրերը պարբերաբար խմբավորվում են որպես հիմնական ընթացակարգային իրավունքներ, որոնք ամրագրված են մարդու իրավունքների տարածաշրջանային համաձայնագրերում, ինչպիսիք են «Շրջակա միջավայրի

վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» (Օրհուսի) կոնվենցիան և «Տեղեկատվության մատչելիության, հասարակության մասնակցության և բնապահպանական հարցերում արդարադատության մասին Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի տարածքային համաձայնագիրը (Էսկասուի համաձայնագիր):

Տեղեկատվության հասանելիությունը անհրաժեշտ է, որպեսզի մարդիկ իմանան, թե ինչ տեսակի վտանգների են ենթարկվում, ինչպես են պետական մարմինները կամ մասնավոր հատվածը օգտագործում կամ առաջարկում օգտագործել հողը, անտառը, հանքային, ջրային, քամու և այլ ռեսուրսները, որտեղ և ինչպես տարհանվել արտակարգ իրավիճակների դեպքում և այլն: Բամաբնույթ աղետների վաղ նախազգուշացման համակարգերը և առաջարկվող ենթակառուցվածքների կամ ռեսուրսների արդյունահանման նախաձեռնությունների մասին ծանուցումները, ներառյալ տեղեկատվության հասանելիությունը և շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատականների պատրաստման վրա ազդելու հնարավորությունը, նույնպես տեղեկատվության հասանելիության օրինակներ են: Կապված ազդեցության, խոցելիության և կարողությունների հետ՝ տեղեկատվության հասանելիությունը իշխանություններից պահանջում է տեղեկատվությունը հաղորդել բնակչության համար հասանելի լեզվով՝ օգտագործելով մատչելի միջոցներ, այդ թվում, օրինակ, զգայական կամ մտավոր խանգարումներ ունեցող, սահմանափակ կարողություններ ունեցող կամ ոչ գրագետ և հեռավոր վայրերում ապրող մարդկանց համար:

Հանրային մասնակցությունը սերտորեն կապված է ազդեցության, խոցելիության և կարողությունների տարրերի հետ, որոնք հիմնված են այն համոզմունքի վրա, որ մարդիկ պետք է ակտիվ և նշանակալի դեր խաղան իրենց վերաբերող որոշումների կայացման գործում՝ կամ ուղղակիորեն, կամ մարդկանց և կազմակերպությունների միջոցով, որոնք ներկայացնում են իրենց շահերն ու առաջնահերթությունները: Մասնակցությունն ավելի լայն հասկացություն է, քան խորհրդակցությունը, և վերաբերում է, օրինակ, որոշումներ կայացնող մարմիններում ներկայացվածությանը: Մարդու իրավունքների միջազգային պայմանագրերում ամրագրված հանրային մասնակցության կարևորության հստակ ձևակերպումը ներկայացված է Օրհուսի կոնվենցիայի նախաբանում. «... շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության և որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության կատարելագործումը բարձրացնում է ընդունվող որոշումների և դրանց իրագործման որակը, նպաստում է հասարակայնության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը շրջակա միջավայրին առնչվող հարցերի կապակցությամբ, թույլ է տալիս հասարակայնությանը արտահայտել իր մտահոգությունը և հնարավորություն է տալիս պետական մարմիններին պատշաճ ուշադրության արժանացնել այդ մտահոգությունը»:

Արդարադատության մատչելիությունը FIRE մեթոդաբանության այն տարրերից մեկն է, որը կապվում է դատական մարմինների և այլ իրավական ծառայությունների

հետ, որոնց մարդիկ կարող են դիմել, երբ այնպիսի ժառանգություն է կրում, որը կարող է պայմանավորված լինել պետական կամ ոչ պետական մարմինների կողմից իրավական պարտավորությունները չկատարելով: Այս տարրը հիմնված է այն ըմբռնման վրա, որ հասարակությունը, որը գործում է իրավունքի գերակայությանը համապատասխան, կիսանի մարդկային արժանապատվությունը և միջազգային և ներպետական օրենսդրությամբ ճանաչված մարդու իրավունքների ամբողջ շրջանակի իրացումը: Իրավունքի գերակայության ճանաչման համար մարդիկ պետք է իմանան իրենց իրավունքները, ունենան բարձրակարգ մասնագետների և որակյալ իրավաբանական խորհրդատվության հասանելիություն, և համարձակ դիմեն իրավական գործողությունների՝ հակամարտությունները լուծելու և ժառանգական փոխհատուցում պահանջելու նպատակով, առանց վախենալու հաշվեհարդարից: Դատավորները, քննչական մարմինները և վեճերի լուծման ավանդական ինստիտուտները պետք է անկախ լինեն և ունենան բավարար ռեսուրսներ իրենց գործառնությունները կատարելու համար:

: .

Գործառնական առումով սա նշանակում է, որ մարդիկ կարող են օգտագործել օրենքը՝ կանխելու համար նոր ենթակառուցվածքների կամ արդյունահանող ձեռնարկությունների կառուցումը, որոնք սպառնում են առողջ միջավայր ունենալու իրենց իրավունքին: Այսինքն, վտանգի առաջ կանգնած մարդիկ կարող են պահանջել, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ, այդ թվում՝ բարելավել վաղ նախազգուշացման համակարգերը, ջրհեղեղներից պաշտպանվելու և երաշտի դեմ պայքարելու միջոցառումները, կամ գործող միջոցառումները հարմարեցնել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին: Այն դեպքում, երբ ժառանգ առաջանում է պետական կամ ոչ պետական գործիչների կողմից իրենց իրավական պարտավորությունները չկատարելու հետևանքով, արդարադատության մատչելիությունը ապահովում է իրավական պաշտպանության տարբեր ձևեր՝ ներառյալ փոխհատուցումը, ժառանգական գնումը, պաշտոնական ներողությունները և այլն: Կարևոր է նշել, որ արդարադատությունը պետք է հասկացվի տեղական համատեքստում և միշտ չէ, որ կարող է իրականացվել պաշտոնական, իրավական ուղիներով: Հետևաբար, տարբեր իրավիճակներում այլ ինստիտուտներ, ինչպիսիք են վեճերի լուծման ավանդական մեխանիզմները, բողոքարկման ընթացակարգերը և միջնորդությունը, կարող են առավել նպատակահարմար լինել, քան դատարանները:

2.4 Կառավարման համակարգեր և ենթակառուցվածքներ

Մարդու իրավունքները կարգավորում են պետության և դրա իրավասության ներքո ապրող մարդկանց միջև հարաբերությունները: Հետևաբար, տարբեր համատեքստերում այս հարաբերությունները ձևավորող կառավարման համակարգերն ու մարմինները համարվում են մարդու իրավունքների իրացման հիմնական միջոցները բոլորի համար՝ մոլորակային եռակի ճգնաժամի համատեքստում: FIRE մեթոդաբանության այս չափորոշիչը առնչվում է նաև մյուս

երեքի հետ, քանի որ կառավարման համակարգերն ու կառուցվածքները ձևավորում են իրավական և քաղաքական շրջանակներ, որոնք, իրենց հերթին, ազդում են ռեսուրսների բաշխման, ծառայությունների մատուցման, իրավապահ մարմինների գործունեության, տվյալների հավաքագրման և իրավունքներ կրողների ու պարտականություններ կատարողների միջև փոխազդեցության մի շարք այլ հարցերի վերաբերյալ որոշումների կայացման վրա: Այնուամենայնիվ, ընդունելով, որ իշխանությունը տարածվում է պետական ինստիտուտներից այն կողմ, պետք է հաշվի առնել նաև կիսապետական կամ ոչ պետական կառավարման համակարգերն ու կառույցները, ինչպես նաև միջազգային իրավական և քաղաքական միավորները, որոնցում հատվում և համընկնում են միջազգային, տարածաշրջանային, ազգային և նույնիսկ ներազգային շահերը:

Միջազգային չափորոշիչներն ու ուղեցույցները վերանայելիս բացահայտվել են հինգ տարրեր, որոնք հստակորեն վերաբերում են այս ասպեկտին, այդ թվում՝

- իրավահեն իրավական և քաղաքական շրջանակ,
- քաղաքացիական հասարակության համար կամ նրա կողմից ստեղծված ինստիտուցիոնալ հարթակներ,
- բյուջեներ, ռեսուրսներ և կարողություններ,
- տվյալներ և մոնիթորինգ,
- հաշվետվողականություն:

Շատ երկրներում ազգային սահմանադրություններն արդեն իսկ ներառում են մարդու իրավունքի սկզբունքները, որոնցից շատերը պարունակում են կյանքի, առողջության, կրթության և գենդերային հավասարության իրավունքի վերաբերյալ դրույթներ: Առողջ միջավայրի իրավունքի հարցերով ՄԱԿ-ի նախկին հատուկ զեկուցող, դոկտոր Դեյվիդ Բոյդը, առողջ միջավայրի իրավունքի տարբերակներ է նշել ավելի քան 100 ազգային սահմանադրություններում (A/73/188) և ազգային օրենսդրությունից վերցված այլ օրինակներում: Մոլորակային եռակի ճգնաժամը հաղթահարելու համար իրավահեն գործողությունների համար կարևոր նշանակություն ունեն շրջակա միջավայրի պաշտպանությանը, աղետների ռիսկի նվազեցմանը, կլիմայական հարմարվողականությանը, կենսաբազմազանության պաշտպանությանը, հողօգտագործման պլանավորմանը և կայուն զարգացմանը վերաբերող իրավական և քաղաքական մոտեցումները: Ուղեցույցներն ու ծրագրերը, ինչպիսիք են ազգային հարմարվողականության ծրագրերը կամ տեղական աղետների պատրաստվածության ծրագրերը, կարող է նաև ներառել մարդու իրավունքներին վերաբերող ձևակերպումներ: Թեև իրավական և քաղաքական շրջանակները ինքնին չեն ապահովում դրանց լիարժեք գործնական իրականացում, այնուամենայնիվ, դրանք հանդես են գալիս որպես կարևոր ուղենիշ քաղաքացիական հասարակության և տուժած անձանց համար՝ հնարավորություն ընձեռելով հետևողականորեն ձգտել հաշվետվողականության հաստատմանը: Առավել հաճախ դրանք կարող են ազդել բյուջեի բաշխման վրա, ուղղորդել ծրագրավորման գործընթացները և ձևավորել գործնական կիրառությունը, հատկապես այն դեպքում, երբ մարդու իրավունքներին և գենդերային հավասարությանը վերաբերող կարճ հիշատակումները ուղեկցվում են

իրականացմանը նպաստող մեթոդաբանություններով, ինչպիսին է FIRE շրջանակը: Թեև հարմարվողականության մի շարք ազգային ծրագրեր և այլ շրջանակներ արդեն իսկ հստակորեն ներառում են մարդու իրավունքների և գենդերային հավասարության սկզբունքները, այնուամենայնիվ, անհրաժեշտ է զգալի աշխատանք կատարել, որպեսզի ազգային օրենսդրությունն ու քաղաքականությունը լիարժեք արտացոլեն 2015 թվականից հետո կազմված զարգացման օրակարգերի հավակնությունները:

Քաղաքացիական հասարակության համար կամ նրա կողմից ստեղծված ինստիտուցիոնալ հարթակները հնարավորություն են տալիս իրականացնել բազմամակարդակ, բազմաոլորտային և բազմաշահառու գործողություններ, որոնք նախատեսված են Աղետների ռիսկի նվազեցման Մենդայի շրջանակում: Եռակի մոլորակային ճգնաժամին արձագանքելու հանձնառություն ստանձնած երկրները գնահատում են քաղաքացիական հասարակության հետ կառուցվածքային երկխոսության արժեքը՝ այն դիտարկելով թե՛ որպես տարբեր ու քննադատական տեսակետները և շահերը լսելու միջոց, թե՛ համագործակցության հնարավորություն: Այս բաղադրիչը սերտորեն համահունչ է տեղեկատվության հասանելիության, հանրային մասնակցության և արդարադատության մատչելիության հետ, մասնավորապես՝ ազգային մակարդակով գործողությունների համատեքստում, որտեղ մասնակցության առավել անմիջական ձևերը գործնականում սահմանափակ են:

Պետությունները գործում են **բյուջեներով**՝ ինչպես ազգային, այնպես էլ ենթաազգային մակարդակներում: Նրանց անհրաժեշտ են ռեսուրսներ և **կարողունակ կառույցներ**՝ իրավական և քաղաքական կարգավորումներն իրականացնելու համար: Մոլորակային եռակի ճգնաժամին հակազդելու մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը կառուցվում է առաջադեմ իրագործման սկզբունքի վրա, որը նախատեսում է, որ պետությունները չեն կարող պատասխանատվություն կրել մարդու իրավունքների այնպիսի խախտումների համար, որոնց լուծումն օբյեկտիվորեն հնարավոր չէ: Սակայն, ինչպես արտացոլված է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրում, աստիճանական իրականացումը պայմանավորված է «առկա ռեսուրսների առավելագույն օգտագործման համար քայլեր ձեռնարկելու» պարտավորությամբ: Հոդված 2(1)-ը սահմանում է.

«Սույն դաշնագրին մասնակցող յուրաքանչյուր պետություն պարտավոր է անհատական կարգով և միջազգային օգնության ու համագործակցության կարգով, մասնավորապես, տնտեսական և տեխնիկական բնագավառներում առկա ռեսուրսների առավելագույն սահմաններում միջոցներ ձեռնարկել, որպեսզի աստիճանաբար, բոլոր հարկ եղած եղանակներով, ներառյալ, մասնավորապես, օրենսդրական միջոցների ընդունումը, ապահովի մարդու՝ սույն դաշնագրում ճանաչվող իրավունքների լրիվ իրականացումը»:

Այս դրույթը կապված է FIRE մեթոդաբանության **հարգել, պաշտպանել և իրացնել** մոտեցման հետ: Այս մոտեցումը բացատրում է երեք հիմնական եղանակները, որոնց

միջոցով պետություններից ակնկալվում է գործել՝ իրենց իրավասության ներքո գտնվող բոլոր անձանց համար մարդու իրավունքների լիարժեք իրացումը ապահովելու նպատակով:

Մարդու իրավունքների հարգումը ենթադրում է, որ պետությունները չեն կարող իրականացնել այնպիսի գործողություններ, որոնք կարող են բնորոշվել որպես իրավունքների խախտում: Խոշտանգումների արգելքը հստակ օրինակ է այդ «խիստ բացասական» պարտավորության՝ խուսափելու որոշակի արգելված վարքագծերից: Մոլորակային եռակի ճգնաժամի համատեքստում առավել արդիական են այնպիսի օրինակները, ինչպիսին է արգելել (թույլտվություն չտալ) ռեսուրսների արդյունահանում իրականացնող ծրագրերը, որոնք կարող են հանգեցնել համայնքների հարկադիր տեղահանման, ջրի և հողի աղտոտման, ինչպես նաև կենսաբազմազանության ոչնչացման: Ռեսուրսների արդյունահանումը, որպես այդպիսին, արգելված չէ, սակայն դրա իրականացման եղանակով է պայմանավորված մարդկանց վրա ազդեցություն աստիճանը:

Մարդու իրավունքների պաշտպանությունը պահանջում է, որպեսզի պետությունները քայլեր ձեռնարկեն ոչ պետական կառույցների, այդ թվում՝ մասնավոր հատվածի, ինչպես նաև միջազգային մարդասիրական և տեխնիկական համագործակցության օպերատորների գործունեությունը կարգավորելու համար: Առօրյա կյանքում կարգավորումը պաշտպանում է մարդկանց՝ ապահովելով, որ սնունդը, ջուրը, բնակարանային պայմանները, բժշկական օգնությունը, տրանսպորտը և այլ ապրանքներն ու ծառայությունները համապատասխանեն ստանդարտներին և չժխտեն շրջակա միջավայրն ու մարդու առողջությունը: Նույնը վերաբերում է եռակի մոլորակային ճգնաժամի համատեքստին, որտեղ իրավունքների պաշտպանությունը ենթադրում է, որ արդյունաբերությունը չպետք է աղտոտի ջրային ռեսուրսները, բնակարանները պետք է համապատասխանեն կլիմայական փոփոխություններին դիմակայող շինարարական նորմերին, և, որ ամենակարևորն է, արտակարգ իրավիճակներում շուկաները չդառնան շահամուլ:

Մարդու իրավունքների իրականացումը ենթադրում է, որ պետք է մշտապես ապահովվեն բոլոր մարդկանց տնտեսական և սոցիալական նվազագույն իրավունքները, այդ թվում՝ արտակարգ իրավիճակներում: ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովը «Մասնակից պետությունների պարտավորությունների բնույթի վերաբերյալ» թիվ 3 մեկնաբանությունում ներկայացնում է ռեսուրսների սակավ ունեցող երկրներին առնչվող մարտահրավերները. «...Որպես ավելի քան մեկ տասնամյակ ուսումնասիրելով մասնակից պետությունների զեկույցները՝ Հանձնաժողովը նկատում է, որ յուրաքանչյուր պետություն պարտավոր է ապահովել յուրաքանչյուր իրավունքի նվազագույն անհրաժեշտ մակարդակի բավարարումը՝ առնվազն նվազագույն պարտավորության առումով: Օրինակ, այն պետությունը, որտեղ մեծ թվով մարդիկ զրկված են անհրաժեշտ սննդամթերքից, անհրաժեշտ առաջնային առողջապահական ծառայություններից, հիմնական կացարանից կամ կրթություն ստանալու հնարավորությունից, առաջին հայացքից, չի կատարում Դաշնագրով ստանձնած իր պարտավորությունները»:

Կլիմայական հարմարվողականության և աղետների ռիսկի նվազեցման համար բյուջեի տրամադրումը, կարողությունների հզորացմանն ուղղված ներդրումներ կատարելն ու առկա ռեսուրսների առավելագույն չափով միջոցներ ձեռնարկելը ձևավորում են այն հիմքը, որն անհրաժեշտ է եռակի մոլորակային ճգնաժամի դեմ իրավահեն մոտեցումների իրականացման համար:

Ռեսուրսների բաշխման և ծառայությունների մատուցման վերաբերյալ որոշումներ կայացնելիս մարդկանց կյանքի վերաբերյալ ճշգրիտ **տվյալների** (տարբերակված ըստ գենդերային, տարիքային, հաշմանդամության և այլ հատկանիշների) բացակայությունը կարող է պատճառ դառնալ, որ որոշ խմբեր անտեսվեն: Առանց մարդկանց փորձառության փոփոխությունների **մոնիթորինգի**՝ ինստիտուցիոնալ ուսուցումը և հաշվետվողականությունը տուժում են ժամանակի ընթացքում: Այս դիտարկումները նույնքան կարևոր են փոքրածավալ հարմարվողականության ծրագրերի համար, որքան ազգային զարգացման ծրագրերը մշակելիս: Կարևոր է, որ FIRE մեթոդաբանությունն աջակցում է մանրամասն տվյալների հավաքագրման և մոնիթորինգի աշխատանքներին, խթանելով մարդու իրավունքների և գենդերային հավասարության ցուցանիշներին համապատասխանող որակական և քանակական չափանիշների ընդունումը:

Վերջապես, կառավարման համակարգեր և կառույցներ չափորոշիչը կարևորում է **հաշվետվողականությունը**: Նախ, հաշվետվողականությունը պահանջում է պարզություն դերերի և պարտականությունների առումով: Եռակի մոլորակային ճգնաժամի բարդ տնտեսական, սոցիալական, քաղաքական և բնապահպանական չափորոշիչների հետ գործ ունենալիս անհրաժեշտ է համակարգել բազմաթիվ գործողություններ կառավարության բազմաթիվ մակարդակներում և ոլորտներում, հաճախ՝ ոչ պետական կառույցների, համայնքների և անհատների հետ գործընկերությամբ կամ համագործակցությամբ: Օրինակ, ինչպե՞ս է քաղաքներում կլիմայի փոփոխություններին հարմարվելու և աղետների ռիսկի նվազեցման պատասխանատվությունը բաշխվում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև և ներսում: Ի՞նչ դեր է խաղում մասնավոր հատվածը: Երկրորդ, հաշվետվողականությունը պահանջում է, որ պարտավորված կողմը պատասխանատվություն կրի ինչպես իր գործողությունների, այնպես էլ անգործության համար: Հաշվետվողականությունը կարող է ներառել, օրինակ, ռեսուրսների բաշխման խորհրդարանական հսկողություն՝ մեդիա-հարցումների համատեքստում, որոնք վերաբերում են ջրի աղտոտման վերաբերյալ դժգոհություններին, ինչպես նաև իրավական գործողություններ՝ սպասվող վտանգից մարդկանց պաշտպանելու անհրաժեշտ միջոցառումներ չկատարելու համար, և այլ նման դեպքեր:

Ընդհանուր առմամբ, FIRE հայեցակարգի չորս չափումները կարող են օգնել կառուցել և տեղեկացնել համատեքստային վերլուծության և պլանավորման մասին՝ կլիմայի փոփոխության և աղետների հետ կապված ռիսկերի, կենսաբազմազանության ոչնչացման, ինչպես նաև շրջակա միջավայրի աղտոտման

և քայքայման նկատմամբ տարբեր ազդեցությունների և խոցելիությունների հասցեագրման համար: «Իրավահեն կլիմայական հարմարվողականությունը Հայաստանում և Վրաստանում» նախագիծը ներկայացնում է օրինակներ պրակտիկայից:

3 Համադրություն

Այս բաժինը համադրում է ջրի իրավունքի վերաբերյալ Հայաստանի զեկույցի և կեցության իրավունքի վերաբերյալ Վրաստանի զեկույցի դիտարկումները: Այս զեկույցները կառուցված են FIRE մեթոդաբանության օգնությամբ, և այս բաժինը միահյուսում է FIRE մեթոդաբանության բոլոր չորս չափորոշիչները՝ ամփոփելով փոխկապակցված դիտարկումները: Այնուամենայնիվ, այս բաժինը ոչ միայն պարզապես ամփոփում են զեկույցները, այլ համադրում է ստացված դիտարկումները իրավահեն կլիմայական հարմարվողականության վերաբերյալ մարդու իրավունքի պաշտպանության միջազգային և ազգային իրավունքների հետ:

Ի լրումն 2015 թվականից հետո զարգացման օրակարգը կազմող բազմաթիվ մեխանիզմներում մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման հաստատմանը յուրաքանչյուր երկրում պետք է հետամուտ լինել կլիմայի փոփոխությանը մարդու իրավունքների վրա հիմնված ադապտացմանը՝ որպես ներպետական օրենսդրության և նրանց կողմից կնքված բազմաթիվ պայմանագրերով սահմանված պարտավորությունների կատարման միջոց:

Հայաստանը միացել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրին, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիային, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիային, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիային և Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության միջազգային կոնվենցիային, ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերյալ այլ պայմանագրերի, որոնք ևս ինչ-որ չափով կապված են մոլորակային եռակի ճգնաժամի հաղթահարման գործողությունների հետ:

2015 թվականի Սահմանադրության մի ամբողջ գլուխ նվիրված է հիմնարար իրավունքներին և ազատություններին, ինչպես նաև մշակվել են Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը:

Վրաստանը նույնպես միացել է վերը թվարկված բոլոր պայմանագրերին՝ բացի Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության միջազգային կոնվենցիայից: 2018 թվականին փոփոխված Սահմանադրության նախաբանում հայտարարվում է «...համընդհանուր ճանաչված մարդու իրավունքների և ազատությունների ապահովման անսասան կամքը»: 2-րդ գլուխը երաշխավորում է « մարդու հիմնարար իրավունքների» լայն շրջանակ, այդ

թվում՝ առողջության պաշտպանության իրավունքը (հոդված 28) և շրջակա միջավայրի պաշտպանության իրավունքը (հոդված 29), ինչպես նաև հավասարության իրավունքը: «Սոցիալական պետության» մասին 5-րդ հոդվածը սահմանում է, որ պետությունը պետք է ապահովի «կենսապահովման և կեցության պատշաճ պայմաններ», ինչն արտացոլում է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 11-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունները:

3.1 Բնակարանային իրավունքը Վրաստանում

Միջազգայնորեն ճանաչված բնակարանային իրավունքը, որպես պատշաճ կենսապահովման իրավունքի մաս, արտացոլված է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում, որի 11(1) հոդվածը սահմանում է. «Սույն դաշնագրին մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի և նրա ընտանիքի համար բավարար այնպիսի կենսամակարդակի իրավունքը, որն իր մեջ ներառում է բավարար սնունդ, հագուստ, բնակարան և կյանքի պայմանների անընդհատ բարելավման իրավունքը»: Այսպիսով, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների Միջազգային կոնվենցիային անդամակցող պետությունները պարտավոր են ճանաչել պատշաճ կենսամակարդակի իրավունքը որպես ոչ միայն նվազագույն չափանիշ, այլև կենսապայմանների «անընդհատ բարելավման» իրավունք:

Չնայած դաշնագրում մանրամասն ներկայացված չէ պատշաճ բնակարանի իրավունքը, այն մշակվել է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի (SUՄԿ) կողմից՝ ընդհանուր մեկնաբանություններում: Ընդհանուր մեկնաբանություն №4-ի (1991) մեջ SUՄԿ-ն նշում է, որ բնակարանի իրավունքը չպետք է մեկնաբանվի նեղ կամ սահմանափակող իմաստով, «օրինակ՝ պարզապես գլխավերևում տանիք ունենալու իմաստով», այլ իրավունքը պետք է ներառի «անվտանգության, խաղաղության և արժանապատվության մեջ ապրելու իրավունքը»: Ընդհանուր մեկնաբանությունը նույնականացնում է պատշաճ բնակարանի իրավունքի յոթ չափանիշ, այդ թվում՝

- բնակության իրավական անվտանգություն,
- ծառայությունների, հարմարությունների և ենթակառուցվածքների մատչելիություն,
- հասանելիություն,
- բնակելի պայմանների ապահովում,
- ֆինանսական հասանելիություն
- տեղանք,
- մշակութային համապատասխանություն:

Կլիմայական հարմարվողականության նախաձեռնությունները, որոնք հաշվի չեն առնում այս չափանիշները, վտանգում են պատշաճ բնակարանային իրավունքի իրացումը: Պատշաճ բնակարանային իրավունքի հարցերով հատուկ զեկուցող

պրոֆեսոր Բալակրիշնան Ռաջագոպալը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային և Մարդու իրավունքների խորհրդին ներկայացրել է բազմաթիվ զեկույցներ՝ նվիրված բնակարանային հարցերին եռակի մոլորակային ճգնաժամի համատեքստում, այդ թվում՝ կլիմայական պայմաններին համապատասխան բնակարանաշինությանը, տեղահանմանը, վերաբնակեցմանը և խտրականության դեմ պայքարին: CESC-ի կողմից առանձնացված յոթ չափորոշիչների վերլուծությունը ավելի քան 30 տարի անց ցույց է տալիս դրանց շարունակական արդիականությունը (ընդհանուր մեկնաբանություն №4): Իր «Արդար փոխակերպումների ճանապարհին. կլիմայական ճգնաժամը և բնակարանային իրավունքը» զեկույցում հատուկ զեկուցողը իրավահեն կլիմայական հարմարվողականության ընդունումը կապում է անբավարար հարմարվողականության հետ:

22. Հարմարվողականությանն ուղղված միջոցառումները ժամանակին և համարժեք չձեռնարկելը, ինչպես դա հաճախ լինում է, երբ մարզինալացված խմբերը և համայնքները բախվում են ռիսկերին, կարող է հանդիսանալ բնակարանային իրավունքի խախտում: Սակայն, եթե նման միջոցառումները մշակված չեն իրավունքներին համապատասխան, ամբողջական և երկարաժամկետ հեռանկարով, ապա դրանք կարող են մեծացնել կլիմայական անբարենպաստ ազդեցությունների ռիսկը, մեծացնել կամ փոխել խոցելիությունը կամ սրել առկա անհավասարությունները:

Անհամապատասխանության օրինակ կարող է լինել պլանավորված վերաբնակեցման նախաձեռնությունը, որը չի պահպանում ընթացակարգային պարտավորությունները, ինչպիսիք են տեղեկատվության հասանելիությունը կամ հանրային մասնակցությունը, կամ որը հաշվի չի առնում նոր վայրում բնակարանի, ջրի, կրթության կամ աշխատանքի իրավունքները:

Մարդու իրավունքների կոմիտեն (ՄԻԿ), որը վերահսկում է քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի կատարումը, 2022 թվականի իր եզրափակիչ դիտարկումներում անդրադարձել է Վրաստանում ներքին տեղահանված անձանց հարցերին:

33. Կոմիտեն բարձր է գնահատում ներքին տեղահանված անձանց վիճակը բարելավելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները, այդ թվում՝ բնակարանով ապահովման, ֆինանսական օգնության և մասնագիտական վերապատրաստման հնարավորությունները: Այնուամենայնիվ, Կոմիտեն խորապես մտահոգված է այն տեղեկատվությամբ, որ ներքին տեղահանված ընտանիքների մոտ 52 %-ը սպասում է բնակապահովման, մինչդեռ շատերը բնակվում են համայնքային շենքերում, դպրոցներում և ճամբարներում, որոնք հարմար չեն երկարաժամկետ բնակության համար, հաճախ զուրկ են հոսող ջրից, էլեկտրաէներգիայից կամ կոյուղու համակարգից: Կոմիտեն ցավում է այդ անձանց շրջանում աղքատության բարձր մակարդակի, նրանց ամսական նպաստի անբավարար չափի և սոցիալական ծառայություններին անբավարար հասանելիության համար:

Վրաստանի թիմի կողմից պատրաստված զեկույցում ուշադրության արժանացած խմբերից մեկը ներքին տեղահանված անձինք են:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն (SUՄԿ) սկսել է Վրաստանի պարբերական զեկույցի վերանայումը՝ հասարակական կազմակերպությունների և Վրաստանի մարդու իրավունքների ազգային անկախ ինստիտուտի՝ Հանրային պաշտպանի գրասենյակի ներկայացրած նյութերի հետ միասին: Այս փաստաթղթերի հիման վրա SUՄԿ-ն կազմել է պաշտոնական հանդիպման ընթացքում քննարկվելիք հարցերի ցանկ, որտեղ մասնավորապես պահանջվում է լրացուցիչ տեղեկատվություն հետևյալի վերաբերյալ.

4. ...Կլիմայական հարմարվողականության քաղաքականության և միջոցառումների վերաբերյալ խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն հետևյալի վերաբերյալ.

ա) ինչպես է մասնակից պետությունը գնահատում կլիմայական փոփոխությունների ազդեցությունը տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների իրացման վրա, մասնավորապես՝ մարզինալացված և անապահով անձանց և խմբերի համար,

բ) կլիմայի փոփոխության ազգային ռազմավարության 2030 թվականի և դրա 2021-2023 թվականների գործողությունների ծրագրի նախնական արդյունքները,

գ) գյուղատնտեսության և գյուղական զարգացման 2021-2027 թվականների ռազմավարության նախնական արդյունքները,

դ) բնական աղետներին պատրաստվածության և արագ արձագանքման համակարգերի բարելավման, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումներ, ինչպես նաև այս նպատակով ռազմավարություն ընդունելու համար ձեռնարկված միջոցառումներ՝ ֆինանսական միջոցների համարժեք բաշխմամբ:

Մասնավորապես, պատշաճ բնակարանի իրավունքի հետ կապված, SUՄԿ-ն խնդրում է.

19. Բնակարանային քաղաքականության բացակայության դեպքում խնդրում ենք տրամադրել թարմացված տեղեկատվություն անօթևան անձանց խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների արդյունքների և թվի վերաբերյալ: Խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն բոլոր անձանց համարժեք և մատչելի բնակարան ստանալու ուղղությամբ ձեռնարկված ջանքերի վերաբերյալ, այդ թվում՝ համայնքապետարանների և այլ կառույցների ենթակայության տակ գտնվող բնակարանների քանակի վերաբերյալ, և արդյոք սոցիալական բնակարանների առկայությունը համապատասխանում է բացահայտված կարիքներին, այդ թվում՝ ներքին տեղահանված անձանց մեծ թվի, վարձավճարների և օտարերկրյա քաղաքացիների ներհոսքի աճի համատեքստում: Խնդրում ենք բացատրել, թե ինչու բնակարանի իրավունքը չի

ներառվում 2022-2030 թվականների մարդու իրավունքների ազգային ռազմավարության մեջ:

Եվս մեկ անգամ կարևորելով ներքին տեղահանվածների վիճակը՝ ընդգծվում է այս խմբի առանձնահատուկ խոցելիությունը: Այնուհետև այս ենթաբաժինը կենտրոնանում է այն բանի վրա, թե ինչպես է Վրաստանի թիմի կողմից կազմված իրավահեն կլիմայական հարմարվողականության զեկույցը դիտարկում ներքին տեղահանված անձանց փորձառությունը բնակարանի իրավունքի տեսանկյունից: Այն օգտագործում է 1998 թվականի՝ ներքին տեղահանվածությանը վերաբերող կողմնորոշիչ սկզբունքները, որոնք անդրադառնում են տեղահանության կանխարգելման, տեղահանության ընթացքում մարդկանց պաշտպանության, ինչպես նաև զինված հակամարտությունների և աղետների ժամանակ կայուն լուծումների ապահովման միջոցառումներին:

3.1.1 Տեղահանման կանխարգելում

Տեղահանությունը կանխելու նպատակով քայլեր ձեռնարկելը պետության պարտականությունն է՝ կապված բնակարանի իրավունքի՝ բնակելիության և ենթակառուցվածքային չափորոշիչների հետ: Բնակելիությունը ենթադրում է վտանգներից պաշտպանված լինելը, իսկ ծառայությունների, հիմնարկությունների և ենթակառուցվածքների առկայությունը թույլ է տալիս, օրինակ, կազմակերպել վաղ նախազգուշացման համակարգերի և տարահանման աշխատանքները, հիմնարկությունները օգտագործել որպես տարահանման կենտրոններ և ժամանակավոր ապաստարաններ, իսկ ենթակառուցվածքները, օրինակ, որպես ջրհեղեղից պաշտպանող կառույցներ»: Այստեղ նույնպես համընկնում է ազդեցության և խոցելիության հարցը: Վրաստանի զեկույցում ներկայացվում են բազմաթիվ օրինակներ, թե ինչպես վտանգները՝ փոխազդելով ազդեցության և խոցելիության պայմանների հետ, հանգեցնում են մահվան և տեղահանման:

Այս առումով, Վրաստանի զեկույցում նշվում են մի քանի գործոններ, որոնք մեծացնում են մարդկանց և գույքի վտանգվածության աստիճանը: Նախ, բնակավայրերը կառուցվում են վտանգի գոտիներում: Վրաստանի լեռնային աշխարհագրության և կլիմայական փոփոխությունների հետևանքով բնակչության մեծ մասը պարբերաբար ենթարկվում է վտանգների՝ ջրհեղեղներ, սողանքներ, ձնահոսքեր և գետի հունի քայքայում, որոնք սպառնում են կյանքին, տներին և կենսապահովմանը: Չեկույցում նաև նշվում է, որ Վրաստանի տարածքի գրեթե 70 %-ը և բնակչության 63 %-ը բախվում են աղետների շարունակական ռիսկի: Որոշ բնակավայրերում իրականացվում են վերափոխման աշխատանքներ՝ վտանգների նկատմամբ դիմադրողականությունը բարձրացնելու ուղղությամբ, սակայն գյուղական և քաղաքային ոչ ֆորմալ բնակավայրերում, որտեղ խոցելիությունը և ռիսկայնությունը կարող են մեծանալ, հիմնականում անտեսվում են: Կարևոր է նշել, որ զեկույցում նաև ընդգծվում է, թե ինչպես են ռիսկերի գնահատման բացակայության և շինարարական սխալ նորմերի պատճառով ռիսկային

տարածքներում կառուցվում խոցելի բնակավայրեր: Այս կետը ընդգծում է նախկինում ներկայացված «հարգել, պաշտպանել, իրացնել» մեփոդաբանության «պաշտպանել» չափորոշիչը:

3.1.2 Պաշտպանություն տեղահանման ընթացքում

Տեղահանումը սովորաբար սկսվում է տարհանմամբ՝ վտանգի առաջացման կանխատեսմամբ կամ դրան ի պատասխան: Տարհանվելու կարողությունը կարևոր է կյանքի իրավունքի տեսանկյունից: Սակայն ամբողջ աշխարհում տարհանման ծրագրերը, եթե դրանք ընդհանրապես գոյություն ունեն, սովորաբար հաշվի չեն առնում տարեց մարդկանց, հղիների և հաշմանդամություն ունեցող անձանց հատուկ կարիքները: Արդյունքում, արտակարգ իրավիճակներում որոշ մարդիկ բառացիորեն մնում են անտեսված: Վրաստանի զեկույցում ընդգծվում է, որ իրենց երկրում, չնայած հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին օրենքի ընդունման գործում նկատվող առաջընթացին, տարհանման պլանավորումը սովորաբար չի լուծում իրավիճակային խնդիրները: Ընդհանուր առմամբ, զեկույցում ընդգծվում են մի շարք վտանգավոր իրավիճակներ, երբ մարդիկ չեն կարողացել տարհանվել, քանի որ ջրհեղեղի կամ ձյան տեղումների պատճառով նրանք հայտնվել են շրջափակման մեջ և չեն կարողացել փախչել:

Հաշվետվությունում նշվում է, որ ներդրվել են վաղ նախազգուշացման համակարգեր, այդ թվում՝ ստեղծվել են մոնիթորինգի 150 կայաններ և 31 համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների համար իրականացվել են ուսումնական նախաձեռնություններ: Այնուամենայնիվ, ոլորտը մնում է թերի, և երկարաժամկետ կայունությունը անորոշ է՝ հաշվի առնելով ենթակառուցվածքների պահպանման և ընդլայնման, տվյալների փոխանակման մեխանիզմների բարելավման և տեղական մասնակիցների կարողությունների զարգացման շարունակական ֆինանսավորման անհրաժեշտությունը:

Ինչպես նշվեց, Վրաստանի զեկույցը ուսումնասիրում է ներքին տեղահանվածների վիճակը: Վրաստանն աչքի է ընկնում որպես առաջատար ներքին տեղահանության նկատմամբ իրավական և քաղաքական արձագանքների մշակման մեջ, ինչն արտացոլվում է նրա նախորդ զեկույցներում ՄԱԿ-ի Հիմնական սկզբունքների ինտեգրմամբ⁵: Հատկանշական է, որ հազարավոր ընտանիքներ ճանաչվել են էկոմիգրանտներ՝ շրջակա միջավայրի վտանգների պատճառով: Այնուամենայնիվ, զեկույցը նաև մատնանշում է մի քանի առանձնահատուկ մարտահրավերներ, որոնց բախվում են ներքին տեղահանվածները և էկոմիգրանտները տեղահանության ընթացքում: Կարևոր է նշել, որ զեկույցը ընդգծում է իրավական և քաղաքական շրջանակներում առկա տարբերությունը. զինված հակամարտությունների հետևանքով տեղահանվածները պաշտպանված են համեմատաբար ամուր

⁵ Տե՛ս Բրուքինգսի ինստիտուտ (2008): «Ներքին տեղահանված անձանց պաշտպանությունը. ձեռնարկ իրավունքի և քաղաքականության մշակողների համար»: Հասանելի է՝ https://www.brookings.edu/wp-content/uploads/2016/06/10_internal_displacement_manual.pdf.

դրույթներով, մինչդեռ աղետների հետևանքով տեղահանվածների («Էկո-միգրանտները») պաշտպանությունը շատ ավելի թերի է: Այնուամենայնիվ, ներքին տեղահանվածների և էկոմիգրանտների փորձը սովորաբար բնութագրվում է խոցելիությամբ և ռիսկայնությամբ: Ձեկույցում նշվում է, որ ժամանակավոր կացարանները հիմնականում տրամադրվում են միայն խոշոր համայնքներում, օգնություն ստացողների ընտրության չափորոշիչները հստակ սահմանված չեն, իսկ հաշմանդամություն ունեցող անձինք շատ դեպքերում մնում են անտեսված: Ներքին տեղահանվածները հաճախ տեղավորվում են գերբնակեցված և խարխուլ բնակարաններում, որոնք երբեմն ենթարկվում են նաև ջրհեղեղի ռիսկի: Բնակարանի իրավունքը փոխկապակցված է առողջության իրավունքի հետ, որը նույնպես տուժում է համայնքների գերբնակեցվածության և հակասանիտարական պայմանների պատճառով:

Հաշվետվությունը շեշտում է կառավարության և միջազգային հանրության միջև գործակցային նախաձեռնությունները՝ բնակարանային ոլորտում դիմադրողականություն ձևավորելու նպատակով: ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի հետ գործընկերությունը փորձարկել է ջրհեղեղակայուն բնակարանաշինության մոդելներ ներքին տեղահանվածների համար՝ համադրելով բարելավված շինարարական տեխնիկան քաղաքաշինության ավելի առաջադեմ գործելակերպերի հետ: Ձեկույցում անդրադարձ է կատարվում նաև ոչ ֆորմալ բնակավայրերի արդիականացմանը՝ համայնքային նախաձեռնությամբ իրականացվող վերանորոգումների, ինչպես նաև ջրհեղեղների կառավարման լայնածավալ ենթակառուցվածքային ծրագրերի միջոցով:

3.1.3 Երկարաժամկետ լուծումներ

Տեղահանության խնդրի երկարատև լուծում կարող է ապահովել բնակավայրերից հեռու տարահանումը կամ արդեն տեղահանված անձանց վերաբնակեցումը: Ձեկույցում նշվում է ներքին տեղահանված անձանց, օկուպացված տարածքների, աշխատանքի, առողջապահության և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև ազգային ու միջազգային գործընկերների կողմից իրականացված զգալի աշխատանքը:

Օրինակ, 2024 թվականին կառավարությունը «Էկոմիգրանտների» համար գնել է ավելի քան 500 բնակարան: Այնուամենայնիվ, զեկույցում նշվում է, որ վերաբնակեցված շատ ընտանիքներ չունեն սեփականության իրավունքի վկայականներ, ապրում են անբարենպաստ բնակարանային պայմաններում և կոմունալ ծառայություններից օգտվելու սահմանափակ հնարավորություն ունեն: Վերաբնակեցման նպատակով ցուցաբերվող ֆինանսական աջակցությունը շարունակում է մնալ անբավարար, իսկ տեղական ինտեգրման աջակցությունը բացակայում է, քանի որ նոր բնակավայրերը հաճախ գտնվում են աշխատավայրից և սոցիալական ծառայություններից հեռու: Ձեկույցում նաև նշվում է, որ համայնքների տեղափոխման և տեղաբաշխման վերաբերյալ որոշումներ

կայացնելիս հաճախ պատկան մարմինները չեն խորհրդակցում տուժած անձանց հետ: Միջազգային չափորոշիչներն ու ուղեցույցները, ինչպիսիք են «Ճգնաժամերի և շրջակա միջավայրի փոփոխությունների պայմաններում ծրագրավորված վերաբնակեցման միջոցով մարդկանց պաշտպանության վերաբերյալ ուղեցույցը», մատնանշում են կարևոր նկատառումներ:⁶

3.2 Ջրի իրավունքը Հայաստանում

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը հատուկ չի առանձնացնում ջրի իրավունքը: Սակայն այս իրավունքը ճանաչվել է CESC-ի և ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից (2010 թ.)՝ 64/292 բանաձևով:

Ընդհանուր մեկնաբանություն N°15-ը բացատրում է, թե ինչպես է ջրի իրավունքը փոխկապակցված բավարար կենսամակարդակի իրավունքի և ֆիզիկական ու հոգեկան առողջության հնարավոր ամենաբարձր մակարդակին հասնելու իրավունքի, ինչպես նաև այլ իրավունքների հետ, ներառյալ՝ կյանքի իրավունքը:

3. Ջրի իրավունքն ակնհայտորեն դասվում է այն երաշխիքների թվին, որոնք անհրաժեշտ են բավարար կենսամակարդակ ապահովելու համար, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ ջուրը գոյատևման կարևորագույն պայմաններից մեկն է... Ջրի իրավունքն անքակտելիորեն կապված է առողջության հնարավոր ամենաբարձր մակարդակին հասնելու իրավունքի (հոդված 12, կետ 1) և բնակարանի ու սննդի իրավունքների (հոդված 11, կետ 1) հետ: Այդ իրավունքն անհրաժեշտ է դիտարկել նաև մարդու միջազգային իրավունքի հռչակագրում ամրագրված այլ իրավունքների համատեքստում, որոնցից առավել կարևոր են կյանքի իրավունքն ու մարդկային արժանապատվությունը:

Մշակվել են իրավունքի երեք չափորոշիչներ, այդ թվում՝

- հասանելիություն,
- մատչելիություն,
- որակ:

Մատչելիությունը վերաբերում է այն պահանջին, որ «յուրաքանչյուր անձ պետք է ապահովված լինի բավարար ջրամատակարարմամբ՝ անձնական և կենցաղային նպատակներով անընդհատ ջուր օգտագործելու համար»: Մատչելիությունը ներառում է չորս տարր՝ ֆիզիկական հասանելիություն, տնտեսական հասանելիություն, տեղեկատվության հասանելիություն և խտրականության

⁶ Բրուքինգսի ինստիտուտ, Ջորջթաունի համալսարան և ՄԱԿ-ի Փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի գրասենյակ (2015): «Ցուցումներ մարդկանց պաշտպանելու վերաբերյալ՝ աղետների և շրջակա միջավայրի փոփոխության պայմաններում ծրագրված վերաբնակեցման միջոցով»: Հասանելի է՝ https://www.brookings.edu/wp-content/uploads/2016/06/GUIDANCE_PLANNED-RELOCATION_14-OCT-2015.pdf

բացառում: Եվ վերջապես, որակը վերաբերում է այն պահանջին, որ ջուրը «պետք է լինի անվտանգ, այսինքն՝ զերծ միկրոօրգանիզմներից, քիմիական նյութերից և ճառագայթային վտանգներից, որոնք սպառնալիք են մարդու առողջության համար»:

ՄԱԿ-ի ջրի իրավունքի հարցերով հատուկ զեկուցող պարոն Պեդրո Արոխո-Ագուդոն կլիմայի փոփոխության համատեքստում ներկայացրել է ջրի իրավունքի վերաբերյալ երեք թեմատիկ զեկույց, որոնք հիմնվում են (1) մարդու իրավունքների վրա ընդհանուր ազդեցության, (2) խոցելի խմբերի և բնակչության վրա ունեցած ազդեցության և (3) հարմարվողականության, մեղմացման, ֆինանսավորման և համագործակցության իրավահեն մոտեցման ձևակերպումների վրա: Բացի այդ, հաջորդ զեկույցում անդրադարձ է կատարվում աղքատ գյուղական վայրերում ապրող մարդկանց ջրի իրավունքին: Ընդհանուր մեկնաբանություն N°15-ի հետ միասին, այս զեկույցներն ամուր հիմք են ստեղծում ջրային ոլորտում իրավահեն կլիմայական հարմարվողականության համար:

3.2.1 Ջրի հասանելիություն և մատչելիություն

Ջեկույցում անդրադարձ է կատարվում ջրի սակավության վրա և նշվում են հետևյալ նպաստող գործոնները.

- երաշտ և ավելի լայն կլիմայական ազդեցություն,
- ենթակառուցվածքային թերություններ,
- մրցակցային առաջնահերթություններ,
- ջրի աղտոտում:

Ջեկույցում ջրի պակասը ներկայացվում է որպես հիմնականում գյուղական համայնքներում ապրող բնակչության հիմնախնդիր: Քաղաքային տարածքներում, ընդհանուր առմամբ, տնային տնտեսություններում ջրի լուրջ պակաս չի նկատվում: Երկրի որոշ հատվածներում եղանակային պայմանների փոփոխությունը հանգեցրել է տեղումների նվազման, ինչի մասին հստակ նշվում է նաև ՀՀ «2021-2025 թթ. հարմարվողականության ազգային ծրագրում»:

Երաշտների, հողի էրոզիայի և այլ բնական աղետների վերաբերյալ Հայաստանի պատմական տվյալների համակցված վերլուծությունը ցույց է տալիս, որ հատկապես գյուղական աղքատ համայնքներն են խոցելի ջրային ռեսուրսների ազդեցության նկատմամբ՝ ջրային անապահովության բարձրացման, առողջական ռիսկերի աճի, գյուղատնտեսական արտադրողականության նվազման և բարձր ջերմաստիճանի դեպքերի աճի պատճառով:

Հայաստանի զեկույցում նշվում է, որ քայքայված կամ գոյություն չունեցող ջրային ենթակառուցվածքները նույնպես մեծապես ազդում են գյուղական բնակավայրերի ջրի սակավության վրա: Խմելու և գյուղատնտեսական օգտագործման համար նախատեսված ջրամատակարարումը մեծապես կախված է խորհրդային դարաշրջանի ենթակառուցվածքներից: Տեղափոխման ընթացքում ջրի զգալի կորուստներ են առաջանում, ինչի հետևանքով զգալիորեն նվազում է ջրի

մատչելիությունը: Տնտեսական մատչելիությունը տուժում է, քանի որ տնտեսավարողները վճարում են ինչպես իրականում օգտագործված, այնպես էլ տեղափոխման ժամանակ «կորած» ջրի համար:

Գյուղացիական տնտեսությունները ջրի հասանելիության համար նաև ստիպված են մրցակցել այլ ջրօգտագործողների հետ, այդ թվում՝ գյուղատնտեսական արտադրողների և հանքարդյունաբերական ձեռնարկությունների հետ: Ձեկույցում նշվում է, որ ջրի իրավունքի բաշխման վերաբերյալ որոշումներում տնտեսական նկատառումները կարող են գերադասել սոցիալականին՝ հանգեցնելով գյուղացիական տնտեսությունների համար նախատեսված ջրի սակավության:

Աղտոտվածությունը նույնպես ազդում է ջրի հասանելիության վրա, քանի որ աղտոտված ջուրը չի կարող օգտագործվել տնային տնտեսությունների կողմից: Այս հարցն առավել մանրամասն քննարկվում է ստորև՝ ջրի որակին նվիրված ենթաբաժնում:

Արդեն նշվել է, որ գյուղացիական ֆերմերային տնտեսություններում ջրի սակավությունն ավելի շատ է զգացվում: Ձեկույցում նաև մատնանշվում են ջրի սակավության հետևանքով առաջացող սեռային և էթնիկ խտրականությունները: Այստեղ նշվում է, որ կանայք և աղջիկները ստիպված են ավելի շատ ժամանակ ծախսել ջուր հայթայթելու և հավաքելու համար:

Սա համահունչ է Հայաստանի երրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ 2023թ. CESC-ի եզրափակիչ դիտարկումներին:

... Կոմիտեն շարունակում է մտահոգված լինել հասարակության մեջ տղամարդկանց և կանանց դերի վերաբերյալ կարծրատիպերի պահպանմամբ և կանանց նկատմամբ խտրականությամբ, որի արդյունքում կանայք կրում են չվճարվող տնային և խնամքի աշխատանքի անհամաչափ բեռը, ինչն էլ խոչընդոտում է նրանց լիարժեք մասնակցությունը աշխատաշուկայում և սահմանափակում նրանց ներկայացվածությունը ղեկավար պաշտոններում:

Նմանատիպ մտահոգություններ են արտահայտվել նաև CCPR-ի 2021 թվականի եզրափակիչ դիտարկումներում:

CESC-ի եզրափակիչ դիտարկումները նաև որոշակի մտահոգություն են հայտնում էթնիկ փոքրամասնությունների (ասորիներ, քրդեր և եզդիներ), փախստականների, ներքին տեղահանված անձանց և միգրանտ աշխատողների վերաբերյալ, սակայն դա կապված չէ ջրի իրավունքի հետ: Այնուամենայնիվ, Կովկասի եզդիների մշակութային կենտրոնի կողմից Կոմիտեին ուղղված զեկույցը, որպես պարբերական վերանայման ընթացակարգի մաս, ընդգծում է ջրի սակավության մարտահրավերներն ու հետևանքները այս բնակչության համար:

Եզդիական որոշ գյուղեր դատարկվել են ջրի (ներառյալ խմելու ջրի) հետ կապված խնդիրների պատճառով: Օրինակ՝ Թլիկ գյուղը պատմականորեն ջուր է ստացել չորս բնական աղբյուրներից. դրանցով ջրվել են այգիներն ու բանջարանոցները,

ինչպես նաև օգտագործել են անասնապահական նպատակներով: Սակայն կլիմայի չորության պատճառով աղբյուրները ցամաքել են: Ջուրը բերվել է խմելու և կենցաղային կարիքների համար, սակայն դա բավարար չէր լիարժեք գյուղատնտեսական գործունեության համար: Արդյունքում, 2020 թվականին գյուղում ֆսացել է 120 ընտանիքներից միայն 7-ը:

Նույնիսկ եզդիական այն գյուղերում, որտեղ մոտակայքում կան ջրի աղբյուրներ (գետեր, աղբյուրներ, ոռոգման ջրանցքներ), ոռոգման համակարգերի հետ կապված խնդիրներ կան: Խորհրդային տարիներին ստեղծված ոռոգման ցանցերը մաշված են, դրանցից շատերը գտնվում են լրիվ անմխիթար վիճակում: Ժամանակակից բարձրարդյունավետ ոռոգման համակարգերի, ինչպիսին է կաթիլային ոռոգումը, փոխարեն եզդի ֆերմերները իրենց հողատարածքները ոռոգելու համար ջուրն ուղղորդում են գետնի մեջ փորված առվակներով: Արդյունքում տեղի են ունենում ջրի անհիմն կորուստներ, իսկ շատ տարածքներ ջուրը պարզապես չի հասնում:

Այս օրինակներն ընդգծում են Հայաստանում ջրի սակավության նկատմամբ տարբեր ռիսկերը և խոցելիությունը:

3.2.2 Ջրի որակը

Հայաստանի զեկույցում բացահայտվում է երկու գործոն, որոնք ազդում են գյուղական վայրերում ջրի որակի վրա: Նախ, երկրի որոշ հատվածներում բացակայում են կեղտաջրերի մաքրման կայանները, կամ առկա կայանները քայքայված են: Երկրորդ, ջրային աղբյուրներն աղտոտվում են արդյունաբերական գործունեության հետևանքով:

CESCR-ի 2023 թվականի եզրափակիչ դիտարկումներում մտահոգություն է հայտնվում.

... անվտանգ խմելու ջրի հասանելիության վրա հանքարդյունաբերական ձեռնարկությունների ազդեցության մասին զեկույցների, մասնավորապես՝ Ջերմուկի ջրամբարի և Սևանա լճի աղտոտման վերաբերյալ, ինչի հետևանքով տուժած համայնքներում նկատվել են ջրի, բավարար սննդի և առողջության իրավունքի խախտումներ, ինչպես նաև փաստ է հասցվել շրջակա միջավայրին:

Վրաստանում պատշաճ բնակարանի իրավունքի և Հայաստանում ջրի իրավունքի մասին հաշվետվությունները պարտադիր չէ, որ բացահայտեն այնպիսի տեղեկատվություն, որը հասանելի չէ այլ հարթակներում: Ընդհակառակը, առկա խնդիրները ներկայացնելով մարդու իրավունքների համատեքստում՝ կլիմայական հարմարվողականության հետ փոխկապակցված բնապահպանական, տնտեսական և սոցիալական չափորոշիչները համակցվում են մարդակենտրոն մեթոդաբանության հետ, որը հիմնված է պետությունների ներքին և միջազգային իրավունքի պարտավորությունների վրա: Երբ ուշադրությունը կենտրոնանում է ռիսկային իրավունքների վրա, այլ ոչ թե առանձին վտանգների կամ ոլորտների,

մոլորակային եռակի ճգնաժամի պայմաններում մարդկային արժանապատվությունը բարձրացնելու համար անհրաժեշտ միջոցառումների տեսակներն ավելի հստակ են արտացոլվում: Հավելվածներ 1-ում և 2-ում ներկայացված են, համապատասխանաբար, հայկական և վրացական զեկույցներում ներկայացված առաջարկությունները:

3.3 Տեղեկատվության հասանելիություն, մասնակցություն և արդարադատության մատչելիություն

Երկու երկրների զեկույցներում էլ նշվում են ընդգրկուն տեղեկատվության հասանելիություն ապահովող նախաձեռնությունների մասին: Հատկանշական է, որ երկու երկրներն էլ անդամակցում են Օրիուսի կոնվենցիային և տարբեր վայրերում ստեղծված են տեղեկատվական կապի կենտրոններ, որոնք զբաղվում են շրջակա միջավայրի պաշտպանության, աղետների ռիսկի նվազեցման և կլիմայական հարմարվողականության վերաբերյալ տեղեկատվության տարածմամբ: Երկու երկրներում էլ լայնորեն օգտագործվում են վեբ-հարթակները: Այս «Օրիուսի կենտրոնները» նաև նպաստում են հանրության մասնակցությանը շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացմանը: Օրինակ՝ 2024 թվականին Վրաստանի շրջակա միջավայրի տեղեկատվության և կրթության կենտրոնը՝ ՄԱԿ-ի կանանց գրասենյակի հետ համատեղ, մշակել է գենդերային գործողությունների ծրագիր՝ ընդգրկուն ներգրավվածությանն ու անվտանգ մասնակցությանը սատարելու համար:

Այնուամենայնիվ, ինչպես նկատել են մարդու իրավունքների պայմանագրերի մոնիթորինգի մարմինները, այս նախաձեռնություններում զգացվում է անհավասարություն: Օրինակ՝ Վրաստանի վերաբերյալ CCPR-ը նկատել է.

... Անդրադառնալով 2015–2020 և 2021–2030 թթ. քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ռազմավարությունների ընդունմանը և դրանց հետ կապված գործողությունների ծրագրերին՝ Կոմիտեն շարունակում է մտահոգված լինել քաղաքական և հասարակական մարմիններում փոքրամասնությունների ներկայացվածության և սոցիալական ինտեգրման ցածր մակարդակով: Չնայած 2015 թվականին ընդունված «Պետական լեզվի մասին» օրենքին և վրացերեն լեզվով կրթության մատչելիության և հասանելիության բարձրացմանը, Կոմիտեն ցավով նշում է, որ տեղեկատվության ստացման առումով լեզվական խոչընդոտները շարունակում են խախտել փոքրամասնությունների, մասնավորապես՝ ավելի քիչ օգտագործվող լեզուներ կրող խմբերի, Դաշնագրի իրավունքներից օգտվելու իրավունքը:

Հայաստանի վերաբերյալ CCPR-ը ընդգծել է հասարակական կյանքում գենդերային անհավասարությունը.

13. ... Ողջունելով գենդերային հավասարության խթանմանն ուղղված միջոցառումները, այդ թվում՝ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» 2013 թվականի օրենքի ընդունումը,

Կոմիտեն շարունակում է մտահոգված լինել.

... (բ) Կանանց ներկայացվածության ցածր մակարդակով քաղաքական և հասարակական կյանքում, այդ թվում՝ գործադիր և օրենսդիր մարմիններում՝ ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում, մասնավորապես՝ ղեկավար պաշտոններում, ինչպես նաև դատական համակարգում և դատախազությունում:

Հանձնաժողովը նմանատիպ դիտարկում է կատարում նաև Վրաստանի վերաբերյալ.

... 15. Հանձնաժողովը շարունակում է մտահոգված լինել կանանց, մասնավորապես՝ խոցելի խմբերի կանանց, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ղեկավար պաշտոններում շարունակական թերներկայացվածության մասին հաղորդագրություններով:

Հաշվետվություններում պակաս ակնառու է արդարադատության մատչելիության տարրը: Հայաստանի վերաբերյալ զեկույցը անդրադառնում է ջրի հասանելիության հետ կապված հակամարտությունների լուծման բողոքների քննության կամ այլ վեճերի լուծման ինստիտուտի բացակայությանը, սակայն ոչ մի զեկույցում ներկայացված չէ արդարադատության ոլորտի դերը իրավահեն կլիմայական հարմարվողականության առաջխաղացման գործում: Այս տարրը նաև ավելի քիչ ուշադրության է արժանացել նախորդ՝ «Կլիմայական տեղաշարժը աֆրիկյան քաղաքներում» նախաձեռնության ժամանակ: Միակ բացատրությունն այն է, որ FIRE-ը հիմնականում զարգացել է որպես կլիմայական հարմարվողականության և աղետների ռիսկի նվազեցման հարցերի ուսումնասիրման գործիք՝ արդարադատության ոլորտից դուրս գտնվող ազգային և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնյաների հետ, և մինչ օրս ոչ մի նախաձեռնություն չի ուսումնասիրել շրջակա միջավայրի հարցերում հաշվետվողականության և արդարադատության մատչելիության սահմանափակումների լուծմանն ուղիները: Ապագա համագործակցությունները կապահովեն առավել մանրամասն ներգրավվածություն ուսումնական ծրագրերում, քննարկումներում և հաշվետվություններում:

Պայմանագրերի մոնիթորինգի մարմինների ցուցումները մատնանշում են այս տարրի ուղղությամբ հետագա աշխատանքի անհրաժեշտությունը: Հայաստանում

2023 թվականի CESC-ի եզրափակիչ դիտարկումներում մտահոգություն է հայտնվել.

... որ անվճար իրավաբանական օգնության հասանելիությունը շարունակում է մնալ շատ սահմանափակ, մասնավորապես՝ դրա մատչելիության և դիմումի ընթացակարգի վերաբերյալ իրազեկվածության պակասի պատճառով, ինչը դժվարացնում է անապահով և մարգինալացված խմբերի համար իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների իրացումը:

Քանի որ Վրաստանի պարբերական ընթացիկ վերանայման գործընթացը դեռևս շարունակվում է, իսկ նախորդ տեղի էր ունեցել 2002 թվականին, դժվար է այս աղբյուրներից պատկերացում կազմել Վրաստանում տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հետ կապված արդարադատության հասանելիության մասին:

Այսպիսով, չնայած երկու երկրներում կառավարության, ակադեմիական շրջանակների, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և միջազգային կազմակերպությունների կողմից տեղեկատվության հասանելիությանը և շրջակա միջավայրի հարցերում հանրության մասնակցության ընդլայնման նպատակով ձեռնարկված միջոցառումների մեծ թվին, արմատավորված խտրականության ձևերը շարունակվում են: Այստեղ արդիական է ավելի վաղ արված տարբերակումը աստիճանական և փոխակերպող հարմարվողականության միջև: Տեղային մակարդակով իրականացվող առանձին ծրագրային քայլերը կարող են որոշակի ազդեցություն ունենալ տեղեկատվության հասանելիության և հանրային մասնակցության վրա, սակայն փոխակերպող հարմարվողականությունը անքակտելիորեն կապված է սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում էական հավասարության ապահովման հետ: Հետևաբար, իրավահեն կլիմայական հարմարվողականության միջոցառումները պետք է համահունչ լինեն գենդերային հավասարության և մարդու իրավունքների ավելի լայն ծրագրերին:

3.4 Կառավարման համակարգեր և մարմիններ

Ինչպես նախորդ բաժնում, այս բաժնում նույնպես կներկայացվեն Վրաստանի և Հայաստանի զեկույցների միջև առկա նմանությունները կառավարման համակարգերի և կառույցների վերաբերյալ: Երկու հաշվետվություններն էլ ընդգծում են, որ տվյալ հարցերով զբաղվում են ոչ միայն պետական մարմինները, այլև քաղաքացիական հասարակությունը, ակադեմիական շրջանակները, մասնավոր հատվածը և միջազգային կազմակերպությունները: Տարբեր դերակատարների կողմից կատարվող այս նշանակալի աշխատանքը վկայում է, որ քննարկվող խնդիրները լուրջ մտահոգություն են առաջացնում տարածաշրջանի լայն շրջանակներում:

Չնայած երկու զեկույցներում նշված նշանակալի նախաձեռնություններին, կլիմայական հարմարվողականության և աղետների ռիսկի նվազեցման

ռազմավարությունները նկարագրվում են որպես հատվածական և հիմնականում դոմորների կողմից ղեկավարվող: Մարդու իրավունքների ինտեգրումը նույնպես սահմանափակ է, չնայած երկու զեկույցներում էլ մեջբերված բազմաթիվ փաստաթղթերում նշվում է ծառայությունների մատուցումը հատկապես խոցելի խմբերում գտնվող մարդկանց համար բարելավելու ուղղությամբ իրականացվող միջոցառումների հարմարեցման կարևորությունը:

Երկու զեկույցներում էլ ընդգծվել են ինչպես կառավարման տարբեր մակարդակների, այնպես էլ ոլորտների միջև համակարգման խնդիրները: Կարևոր է նաև, որ, ինչպես ներկայացված էր նախորդ բաժնում, քաղաքացիական հասարակության համար կան ինստիտուցիոնալացված հարթակներ, սակայն դրանց ազդեցությունը կարող է սահմանափակ մնալ:

Տեղական իշխանությունները, որոշ չափով նաև ազգային կառավարությունները, չունեն բավարար կարողություններ՝ ինքնուրույն առաջ մղելու կլիմայական հարմարվողականության նպատակները: Մինչ այժմ զգալի դեր են խաղում միջազգային գործընկերները, և որոշ դեպքերում նկատվում է նաև պետական-մասնավոր գործընկերության ներուժի պակասի: Սա ուղղակի հետևանք է ֆինանսավորման պակասի, քանի որ երկու երկրներն էլ բախվում են ինչպես հնացած ենթակառուցվածքների, այնպես էլ պետական հատվածում մարդկային և նյութական ռեսուրսների սահմանափակումների հետ: Բացի այդ, երկու երկրների համար կարևոր սահմանափակում է այն տվյալների սակավությունը, թե ինչպես են վտանգների ազդեցությունն ու խոցելիությունը տարբեր կերպ արտահայտվում սեռի, տարիքի, հաշմանդամության և այլ հատկանիշների կտրվածքով: Վերջինիս դինամիկան նույնպես համակարգված կերպով չի վերահսկվում:

Ոչ մի զեկույց չի անդրադառնում կառավարության անդամների կամ ոչ պետական մարմինների ներկայացուցիչների կողմից միջազգային կամ ներպետական օրենսդրությամբ ստանձնած պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվության ապահովման մեխանիզմներին:

3.5 Առաջարկություններ

Առաջարկությունները հիմնականում վերաբերում են իրավական և քաղաքական միջոցառումներին, որոնք կարող են օգնել լուծել զեկույցներում նշված խնդիրները: Վրաստանի համար առաջարկությունները հիմնականում վերաբերում են բնակարանային ոլորտի և ներքին տեղահանված անձանց պայմանների բարելավմանը, այնպիսի մարտահրավերների լուծմանը, ինչպիսին է շինարարական չափորոշիչների անբավարար կիրառումը, որը նպաստում է կլիմայական փոփոխությունների նկատմամբ խոցելիությանը, էկոմիգրանտների ոչ լիարժեք իրավական պաշտպանությանը, ինչպես նաև հետազոտություններին և այլ գնահատումներին՝ տարբերակված ռիսկերի ազդեցության և խոցելիության մասին

գիտելիքներն ու ըմբռնումները բարելավելու նպատակով: Հայաստանի դեպքում առաջարկները նորարարական են. դրանք ընդգծում են ջրային ոլորտում վեճերի լուծման մեխանիզմների վերափոխման կարևորությունը, մարդու իրավունքների սկզբունքների համակարգված ինտեգրումը 2025-ից հետո նախատեսվող Ազգային հարմարվողականության պլանավորման գործընթացում, գյուղական տարածքներից քաղաքներ երաշտով պայմանավորված միգրացիայի խնդրի լուծումը, ինչպես նաև մարդու իրավունքների ազդեցության գնահատման պահանջները այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հանքարդյունաբերությունն ու էներգետիկան: Առաջարկություններում նշված են կոնկրետ նախարարություններ և գերատեսչություններ, որոնք կարող են ղեկավարել այս նախաձեռնությունները:

Հավելվածներ 1 և 2-ը ներկայացնում են Հայաստանի և Վրաստանի առաջարկությունները ամբողջությամբ:

4 Եզրակացություն. Փոփոխության տեսություն

Հանրային հատվածի այս նորարարական ծրագիրը միավորել է Հայաստանի և Վրաստանի ազգային և տեղական ինքնակառավարման մարմինների մասնագետներին՝ իրավահեն կլիմայական հարմարվողականության տեսության և գործնական ուսումնասիրության համար: Միջոցառումն առանձնահատուկ նշանակություն ունեցավ, քանի որ փորձագետների միջև գիտելիքների փոխանակման և համատեղ աշխատանքի նպատակն էր տարածաշրջանում առավել հավակնոտ և լայնածավալ համագործակցության մեկնարկը: Երկու երկրների ղեկույցները, այս ամփոփ ղեկույցի հետ միասին, ծառայում են որպես ելակետ նոր նախաձեռնությունների համար՝ ինչպես նոր, այնպես էլ գոյություն ունեցող գործընկերների հետ: Այս եզրափակիչ բաժինը անդրադառնում է այս մոտեցման հիմքում ընկած փոփոխության տեսությանը:

Ինչպես ավելի վաղ նշվել է սույն ղեկույցում, հանրային ոլորտում նորարարությունների առաջխաղացումը՝ մարդու իրավունքների և գենդերային հավասարության համակարգային ինտեգրումը օրենքում, քաղաքականության մեջ և գործնականում բարելավելու միջոցով, նպատակ է, որին աջակցում է 2015-ից հետո զարգացման օրակարգը, ինչպես նաև պետությունների միջազգային և ներքին իրավական պարտավորությունները: Չնայած իրավունքների հետ կապված սկզբունքներին, ինչպիսիք են խոցելի խմբերի մարդկանց կարիքներին առաջնահերթություն տալը, արտացոլված են Հայաստանի և Վրաստանի համապատասխան իրավական և քաղաքական փաստաթղթերում, երկու երկրներն էլ չեն ընդունում կլիմայական հարմարվողականության կամ մոլորակային եռակի ճգնաժամի դեմ պայքարի ավելի լայն գործողությունների նկատմամբ իրավահեն հստակ մոտեցում: Մեռային հավասարությանը ավելի մեծ ուշադրություն է հատկացված: Այս նախագիծը ղեկավարող փոփոխության տեսությունը կարող է արտահայտվել հետևյալ կերպ.

Եթե կլիմայական հարմարվողականության ոլորտում աշխատող պետական հատվածի մասնագետներին աջակցություն ցուցաբերվի մարդու իրավունքների և գենդերային հավասարության ինտեգրված հեռանկարների վերաբերյալ նոր գիտելիքներ ձեռք բերելու համար, և եթե այդ գիտելիքները օգնեն մյուսներին ճանաչել FIRE-ի մեթոդաբանության գործնական արդյունավետությունը, ապա կարելի է ստեղծել հնարավորություն՝ այս մոտեցումը ինտեգրելու մոլորակային եռակի ճգնաժամին արձագանքող գործողությունների մեջ:

Փոփոխության այս տեսությունը նախատեսում է բազմաթիվ մոտեցումներ:

Նախ, ծրագրի առանձին մասնակիցները դառնում են FIRE դեսպաններ իրենց սեփական հաստատություններում: Երկու երկրներիի զեկույցները և այս համառոտ զեկույցը ազգային լեզուներով տրամադրվում են գործընկերներին, և կարող են առաջարկվել տարբեր բնույթի փոփոխություններ՝ կամ ծրագրի ղեկավարների հետ համատեղ, կամ անկախ: Նման մոտեցման օրինակ է Ինդոնեզիայի Արդարադատության և մարդու իրավունքների նախարարության աշխատանքը: Անձնակազմը մասնակցել է RWI-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանային գրասենյակի կողմից ղեկավարվող համատեղ ուսուցման մի շարք նախաձեռնությունների: Հետագայում նախարարությունը որոշեց FIRE-ը ներառել տեղական կլիմայի փոփոխության ոլորտի աշխատանքների մեջ:

Երկրորդ, երկու երկրների զեկույցները, այս սինթեզային զեկույցը և տեղեկատվության տարածման ու ծրագրերի մշակման այլ նախաձեռնություններ համոզում են կառավարության, քաղաքացիական հասարակության, ակադեմիական ոլորտի և մասնավոր հատվածի համապատասխան ներկայացուցիչներին ուսուսասիրել, թե ինչպես կարող է FIRE-ը նպաստել մարդու իրավունքների և գենդերային հավասարության բաղադրիչների ընկալմանը այս մարտահրավերների տեսանկյունից, ինչն էլ կհանգեցնի նոր գործընկերությունների, որոնք ուղղված են մարդու արժանապատվության բարձրացմանը եռակի մոլորակային ճգնաժամի պայմաններում:

Այնուամենայնիվ, հարցը Վստում է անպատասխան. մարդու իրավունքների և գենդերային հավասարության տերմինաբանությամբ հարցերը ձևակերպելուց և գործող միջազգային և ներպետական իրավական պարտավորություններին համապատասխանեցնելուց բացի, ինչ եղանակով կարող է FIRE-ը փոխել իրավիճակը տեղական կամ ազգային մակարդակներում:

Նախ, արդյունավետ է օրենքների և քաղաքականության փոփոխությունը: Առողջ շրջակա միջավայրի իրավունքի հարցերով ՄԱԿ-ի նախկին հատուկ զեկուցող դոկտոր Դեյվիդ Բոյդը դասակարգել է շրջակա միջավայրի պայմանների բարելավման մոտեցումները առողջ միջավայրի իրավունքի վերաբերյալ սահմանադրական կամ օրենսդրական դրույթների ընդունումից հետո մի շարք

երկրներում, ինչպիսիք են Բրազիլիան, Հնդկաստանը, Ֆիլիպինները և Բելգիան:⁷ Ներքին տեղահանությունների համատեքստում ՄԱԿ-ի փախստականների հարցերով զերագույն հանձնակատարը փաստաթղթավորել է ներքին տեղահանված անձանց պաշտպանության բարելավումները համապատասխան օրենքների և քաղաքականության ընդունումից հետո:⁸ Ավելի լայն առումով, ազգային օրենսդրության և քաղաքականությունների համապատասխանեցումը մարդու իրավունքների միջազգային չափորոշիչներին ազդեցություն է ունեցել մի շարք ոլորտներում, մասնավորապես՝ առողջության իրավունքի սահմանադրականացումը մեծապես ազդել է առողջապահության ոլորտում գրանցված արդյունքների վրա:⁹

Երկրորդ, կարևոր է փոխել հանրային հատվածի մասնագետների մտածելակերպն իրենց աշխատանքի մասին: Փարիզի համաձայնագրի շրջանակներում ստեղծված Կարողությունների զարգացման Փարիզի կոմիտեն ստեղծվել է այն գիտակցմամբ, որ բոլոր մակարդակների և բոլոր ոլորտների գործիչները աջակցության կարիք ունեն՝ կլիմայի փոփոխության դեմ պայքարի իրենց կարողությունները հզորացնելու համար: Իհարկե, կարողությունների զարգացման մեթոդաբանությունը կարևոր նշանակություն ունի, իսկ փաստերը վկայում են գիտելիքների և ուսուցման համատեղ կիրառման կարևորության մասին:

Երրորդ, մոլորակային եռակի ճգնաժամի վրա աշխատող տարբեր դերակատարների միջև փոխհարաբերությունների փոփոխությունը կարող է փոխակերպող լինել: Պետական հատվածում առաջնահերթությունների փոփոխությանը նպաստելը, մարդկանց որպես պասիվ շահառուներ դիտարկելու փոխարեն՝ զարգացման գործընկերներ, ծառայությունների օգտատերեր և իրավունքների կրողներ դիտարկելը, թույլ է տալիս այնպիսի որոշումներ կայացնել, որոնք ճշգրտորեն արտացոլում են տուժած անձանց կարիքներն և առաջնահերթությունները: Նույն կերպ, տեղական և ազգային կառավարության հետ փոխգործակցության նպատակով քաղաքացիական հասարակության համար ինստիտուցիոնալացված հարթակների ընդլայնումը հնարավորություն է տալիս պարտականություններ կրողներին առավել մանրամասն պատկերացում կազմել բնակչության տարբեր խմբերի մասին և արձագանքել քննադատությանը, երբ ծրագրերը փաստ են պատճառում կամ չեն կարողանում հասնել նշված նպատակներին:

⁷ Դեյվիդ Բոյդ, «Փոփոխության խթանիչ. առողջ շրջակա միջավայրի իրավունքի իրագործման քառասնամյա փորձի գնահատում», Ջոն Նոքսի և Ռամին Պեջանի խմբագրությամբ, *Մարդու իրավունքը առողջ միջավայրում* (Քեմբրիջի համալսարանի հրատ., 2018): Տես նաև՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդ, «առողջ միջավայրի իրավունք. լավագույն փորձ». հատուկ զեկուցողի զեկույցը մարդու իրավունքների պարտավորությունների մասին, որոնք առնչվում են անվտանգ, մաքուր, առողջ և կայուն շրջակա միջավայրից օգտվելու իրավունքի իրագործմանը» (A/HRC/43/53):

⁸ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի վարչություն (2025), «Գլոբալ զեկույց ներքին տեղահանության վերաբերյալ օրենսդրության և քաղաքականության մասին. ազգային պատասխանատվության իրականացում»:

⁹ Տես՝ Բեթ Ա. Սիմոնս, «Մորիլիզացվելով մարդու իրավունքների համար. միջազգային իրավունքը ներքին քաղաքականությունում» (Cambridge University Press, 2009):

Չորրորդ, մոլորակային եռակի ճգնաժամի մարդկային գործոնի դերի վերաբերյալ գիտելիքների և ընկալումների բարելավումը նպաստում է փաստացի տվյալների վրա հիմնված ծրագրերի մշակմանը: Ուսուցման և գիտելիքի համատեղ ստեղծման այս գործընթացի մասնակիցների կողմից մշակված երկու երկրների հաշվետվություններն օգնում են ձևակերպել կլիմայի իրավահեն հարմարվողականության պայմանները, ինչպես նաև մատնանշում են գիտելիքի բազմաթիվ թերություններ, որտեղ բազմաոլորտային համագործակցությունը շահագրգիռ կողմերի հետ կարող է լուծել ռիսկայնության և խոցելիության տարբեր խնդիրներ:

Միշտ հարցեր կլինեն ֆինանսավորման մակարդակի և գործընթացի առաջ մղման քաղաքական կամքի վերաբերյալ, բայց երբ հարմարվողականության մարտահրավերները քննարկվում են FIRE-ի կողմից ամփոփված մարդու իրավունքների և գենդերային հավասարության մեթոդաբանության շրջանակներում, ի հայտ է գալիս այլ օրակարգ: Չնայած FIRE-ի ինտեգրումը միշտ չէ, որ հիմնական ուշադրության կենտրոնում է, կարևոր է այն փաստը, որ այն նպաստում է օրենքների, քաղաքականության և պրակտիկայի համապատասխանեցմանը միջազգային և ներպետական իրավական պարտավորություններին:

«Իրավահեն կլիմայական հարմարվողականությունը Հայաստանում և Վրաստանում» ծրագիրը ապացուցել է FIRE-ի՝ որպես ուսուցման և գիտելիքի համատեղ ստեղծման գործիքի հայեցակարգը, որը նպաստում է մարդու իրավունքների և գենդերային հավասարության առաջխաղացմանը մոլորակային եռակի ճգնաժամի պայմաններում: Մասնակիցները սովորում են կիրառել Փարիզի համաձայնագրում նշված մարդու իրավունքների և գենդերային հավասարության սկզբունքները և որոշել գործողությունների առաջնահերթությունները ազգային համատեքստում: Չնայած հանրային հատվածի նորարարական ծրագրի ձևաչափը ներառում է դեմ առ դեմ և առցանց համագործակցության համադրություն 12 ամսվա ընթացքում, մոդելը նաև հարմար է ուսուցման և գիտելիքի համատեղ ստեղծման ավելի ինտենսիվ ժամանակահատվածների համար, ինչպիսիք են ազգային հարմարվողականության ծրագրերի սկզբում: Գոյություն ունեն նաև լայն հնարավորություններ հետազոտական և քարոզչական նախաձեռնությունների համար, որոնք միավորում են ակադեմիական շրջանակները, միջազգային կազմակերպությունները, քաղաքացիական հասարակությունը և մասնավոր հատվածը՝ ինչպես մեր տարածաշրջանում, այնպես էլ ամենուր, որտեղ մարդիկ պայքարում են եռակի մոլորակային ճգնաժամի պայմաններում:

5 Հավելված 1. Հայաստանի վերաբերյալ զեկույցի առաջարկություններ

Քանի որ Հայաստանը բախվում է փոփոխվող կլիմայի բարդ մարտահրավերներին, ջրային ռեսուրսների կառավարումը գտնվում է հարմարվողականության հրամայականների առաջնագծում: Ջրի իրավունքը, որը մարդու միջազգային իրավունքով սահմանում է մատչելիություն, հասանելիություն և որակ, ապահովում է սկզբունքային շրջանակ՝ կլիմայական արձագանքները ձևավորելու համար այնպես, որ դրանք լինեն և՛ արդյունավետ, և՛ արդարացի:

Մի երկրում, որտեղ ջրի հասանելիությունը գնալով ավելի է վտանգվում գերշահագործման, անարդյունավետ ենթակառուցվածքների և հիդրոլոգիական օրինաչափությունների փոփոխության հետևանքով, ջրային ռեսուրսների կայուն պաշտպանությունն ու կառավարումը ոչ միայն բնապահպանական խնդիր է, այլև մարդու իրավունքների պարտավորություն: Խմելու ջրի, գյուղատնտեսության և էկոհամակարգերի համար հուսալի ջրամատակարարումը պահանջում է ոչ միայն տեխնիկական լուծումներ, այլ նաև համահունչ տեսլական, որը կհարգի բոլորի արժանապատվությունն ու իրավունքները:

Մատչելիությունը նույնպես պետք է դիտարկվի ոչ միայն ֆիզիկական կամ տնտեսական հասանելիության տեսանկյունից, այլ դրա ավելի լայն սոցիալական և ինստիտուցիոնալ չափորոշիչների տեսանկյունից: Ջրային ռեսուրսների վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացում հանրային մասնակցությունը, ժամանակին և մատչելի տեղեկատվության տարածումը, ինչպես նաև ինստիտուցիոնալ և աշխարհագրական խոչընդոտների վերացումը կարևոր են, որպեսզի բոլոր բնակիչները՝ հատկապես գյուղական համայնքներում, կանայք, հաշմանդամություն ունեցող անձինք և այլ մարզինալացված խմբեր, կարողանան իրագործել ջրի իրենց իրավունքը: Նման ընդգրկվածության բացակայության դեպքում հարմարվողականության ջանքերը վտանգում են վերարտադրել կամ խորացնել առկա անհավասարությունները:

Միևնույն ժամանակ, ջրի որակը գտնվում է բնապահպանության և հանրային առողջության հատման կետում: Կլիմայական փոփոխությունները բարդացնում են աղտոտման, ծանրաբեռնված մաքրման կայանների և ենթակառուցվածքների աղետալի վիճակի ռիսկերը: Անվտանգ ջրի ապահովումը պահանջում է արդյունավետ մոնիթորինգ, թափանցիկություն և ինստիտուցիոնալ կարողություններ՝ ռիսկերի վերացման համար, մինչև դրանք վերածվեն ճգնաժամերի:

Կարևոր է, որ մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը կլիմայական հարմարվողականության հարցում պահանջում է ոչ միայն նվազագույն չափորոշիչների կատարում, այլև խտրական խոչընդոտների ակտիվ բացահայտում և վերացում: Խտրականության դեմ պայքարի սկզբունքը պահանջում է, որ հարմարվողականության միջոցառումները չանտեսեն Հայաստանի բնակչության կյանքի իրողությունները: Քաղաքականությունները մշակելիս պետք է հաշվի առնվեն խոցելիության տարբեր խմբերի պահանջմունքները և մշակված լինեն այնպես, որ հավասարապես պահպանվեն բոլորի արժանապատվությունն ու հնարավորությունները:

Անցումային այս պահին Հայաստանը հնարավորություն ունի մարդու իրավունքները ներառել կլիմայի հարմարվողականության օրակարգում: Դա ոչ միայն կպաշտպանի բնակչությանը կլիմայական փոփոխությունների ամենավատ հետևանքներից, այլև կամրապնդի ժողովրդավարական կառավարման համակարգը, սոցիալական ներդաշնակությունը և հաջորդ սերունդների դիմադրողականությունը:

Հաշվի առնելով այս գեկույցի մշակման ընթացքում դիտարկված բոլոր կետերը, առաջարկում ենք քննարկման համար հետևյալ առաջարկությունները.

5.1 Հասանելիություն, մատչելիություն, որակ

• Հասանելիություն և մատչելիություն

- Ներդրումներ կատարել ջրամատակարարման ենթակառուցվածքներում գյուղական և թերսպասարկվող տարածքներում՝ կենտրոնանալով գենդերային հավասարության վրա (հատկապես կանանց համար, ովքեր պատասխանատու են ջրի հավաքման համար):
- Ուսումնասիրել փոքր ֆերմերների և մարգինալացված այլ խմբերի անձանց համար ջրի մատչելիության բարելավման միջոցառումներ:
- Խրախուսել այլընտրանքային միջոցներ՝ ջրային ռեսուրսներից կախվածությունը նվազեցնելու համար (օրինակ՝ կայուն գյուղատնտեսություն, վերականգնվող էներգիա):
- Նվազեցնել ջրի սակավությունը՝ ներդրումներ կատարելով ջրի խնայողության և արդյունավետության ոլորտում՝ ջրի կուտակում, ընդլայնված ոռոգում, արդյունավետ փոխադրման համակարգեր և խելացի տեխնոլոգիաներ:
- Ներդնել թվային մոնիթորինգի և հաշվետվությունների համակարգեր:
- Ներդնել ջրային կառավարման խելացի տեխնոլոգիաներ, մասնավորապես՝ գյուղատնտեսության և քաղաքային ջրամատակարարման մեջ:

- Ներդնել ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման արդյունավետ համակարգեր:
- Փորձնական ծրագրեր իրականացնել Արարատյան դաշտավայրում ոռոգման նպատակով մաքրված կեղտաջրերի վերօգտագործման համար:
- Վերականգնել և ամրացնել գետափերը՝ օգտագործելով բնական ռեսուրսների վրա հիմնված լուծումներ:
- Պաշտպանել և արդյունավետ կառավարել Արարատյան արտեզյան ավազանը և գետային էկոհամակարգերը:
- Ընդլայնել գետավազանային կառավարման պլանները և իրականացնել դրանք՝ արդեն իսկ գոյություն ունեցողների օրինակով (օրինակ՝ Արարատյան գետավազանի կառավարման պլան):

● Որակ

- Ջրի որակի մոնիթորինգի համակարգերի ամրապնդում. մոնիթորինգի ցանցի ընդլայնում:
- Խմելու և ոռոգման ջրի կանոնավոր ստուգման ապահովում:
- Լաբորատորիաների վերազինում և հավատարմագրում՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանելու համար:
- Բարելավել ջրի որակի վերաբերյալ տվյալների հասանելիությունը և թափանցիկությունը:
- Քաղաքային բնակավայրերում կեղտաջրերի մեխանիկական և կենսաբանական մաքրման կայանների ապահովում:
- Գյուղական կեղտաջրերի կառավարման համակարգերի ներդրում:

5.2 Տեղեկատվության հասանելիություն, հանրության մասնակցություն և արդարադատության մատչելիություն

- Տեղեկատվություն
 - Պետական մարմինների կողմից տեղեկատվության ապահովում բաց հարթակների միջոցով:
 - Մշակել ինտերակտիվ գործիքներ (օրինակ՝ բջջային հավելվածներ, թվային քարտեզներ)՝ ջրային տեղեկատվությանը հանրության հասանելիության համար:
 - Հարմարեցնել հաղորդակցությունն ու իրազեկությունը՝ դրանք մատչելի և մշակութային առումով համապատասխան դարձնելու համար:
 - Բարելավել «ՀայՀիդրոմետ» հավելվածը՝ իրական ժամանակի տվյալներով և օգտագործողին հարմար գործառույթներով:
 - Ներմուծել աղետների ռիսկի նվազեցումը, այդ թվում՝ ջրի սակավությունը, դպրոցական ուսումնական ծրագրերում (ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ղեկավարությամբ):

- Սկսել իրազեկման արշավներ ջրի անվտանգ օգտագործման և պահպանման վերաբերյալ:
 - Տարածել հասանելի տեղեկատվություն խոցելի բնակչության շրջանում ջրի որակի և ռիսկերի վերաբերյալ:
 - Մշակել արտակարգ իրավիճակների վերաբերյալ ազգային հաղորդակցման ռազմավարություն:
 - Բարելավել վաղ նախազգուշացման համակարգերը (օրինակ՝ SMS, ռադիոազդանշաններ, էլ. փոստ, աշխարհագրական թիրախավորում):
 - Միավորել արտակարգ իրավիճակների հաղորդակցման կենտրոնները ոստիկանության, միգրացիոն և փրկարարական ծառայությունների միջև:
- Մասնակցություն
 - Վերականգնել նախարարություններին կից հանրային խորհուրդները՝ վերահսկողությունը և մասնակցային որոշումների կայացումը բարելավելու նպատակով:
 - Ապահովել շահագրգիռ կողմերի մասնակցությունը և նիստերի ժամանակին գումարումը:
 - Կազմավորել համայնքների հետ կանոնավոր հետադարձ կապի օղակներ՝ կարիքները գնահատելու և ճիշտ ռազմավարությունը մշակելու համար:
 - Ընդլայնել համայնքների դերը որոշումների կայացման գործընթացում՝ հանրային լուծումների և Բաց կառավարման գործընկերության հարթակի նման մեխանիզմների միջոցով:
 - Առաջնահերթություն տալ հաշմանդամություն ունեցող անձանց և ջրային կառավարման և տեղեկատվության հասանելիության բարձր խոցելիության իրավիճակներում գտնվող այլ անձանց ներառմանը:
 - Խթանել գենդերային ներառական ջրային կառավարումը և ճանաչել կանանց դերը ջրային ռեսուրսների կառավարման մեջ:
 - Իրականացնել իրազեկման և կրթական ծրագրեր՝ համագործակցելով ՀԿ-ների, դպրոցների և այլ խմբերի հետ:
 - Արդարադատության մատչելիություն
 - Վերականգնել կամ բարեփոխել 2019 թվականից հետո լուծարված վեճերի լուծման մեխանիզմները, ինչպիսիք են վեճերի լուծման կոմիտեն:
 - Ներդնել միջնորդության ինստիտուտ կամ շրջակա միջավայրի մարդու իրավունքների պաշտպանի պաշտոն:
 - Ապահովել ցանկացած նոր մեխանիզմի անկախ կառավարումը և ֆինանսավորումը՝ անաչառությունը երաշխավորելու համար:
 - Բարեփոխումները համապատասխանեցնել Օրհուսի կոնվենցիայի արդարադատության մատչելիության և շրջակա միջավայրի հարցերում հանրության մասնակցության դրույթներին:

- Լուծել Ջրօգտագործողների միությունների շրջանակներում վեճերի լուծման և ջրօգտագործման թույլտվությունների հարցերով զբաղվող հատուկ մարմինների բացակայության խնդիրը:
- Ապահովել կարգավորող մարմինների, ջրօգտագործողների և միությունների միջև վեճերի արդյունավետ լուծումը:

5.3 Կառավարման համակարգեր և մարմիններ

- Օրենսդրություն և քաղաքականություն
 - Մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը հետևողականորեն ներառել 2025 թ. և հետագա տարիների համար նախատեսված Ազգային հարմարվողականության ծրագրում (ԱՀՊ):
 - Ջրի իրավունքն ապահովելու նպատակով ամրապնդել իրավական շրջանակները:
 - Իրականացնել ջրի վերօգտագործման պրակտիկան խթանող օրենսդրական փոփոխություններ:
 - Վերանայել և բարելավել մաքրված կեղտաջրերի չափորոշիչները:
 - Մշակել ջրհեղեղների ռիսկի կառավարման և երաշտային արտակարգ իրավիճակների ծրագրեր:
 - Խստացնել ձեռնարկություններից կեղտաջրերի արտանետման կարգավորումը և վերահսկողությունը:
 - Ամրապնդել միջոլորտային համագործակցությունը պետական մարմինների, ՀԿ-ների, ակադեմիական հաստատությունների և միջազգային գործընկերների միջև:
 - Համակարգման պատասխանատվությունը վերապահել Շրջակա միջավայրի կամ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը:
 - Տեղահանման ռիսկը և գյուղական բնակավայրերից դեպի քաղաք միգրացիան դիտարկել որպես կլիմայի հարմարվողականության և աղետների ռիսկի նվազեցման ավելի լայն միջոցառումների մաս:
 - Պահանջել մարդու իրավունքների վրա ազդեցության գնահատումներ ՇՄԱԳ/ՇՄԱԳ պահանջող նախագծերում, հատկապես այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հանքարդյունաբերությունը և էներգետիկան:

● Տվյալներ

- Աջակցել շահագրգիռ կողմերի մասնակցությամբ հետազոտությունների անցկացմանը՝ խոցելի իրավիճակներում գտնվող անձանց փորձառության վրա հիմնված ինֆորմացիան խորացնելու համար:

- Բյուջեներ, ռեսուրսներ և կարողություններ
 - Աջակցել Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ինստիտուտին՝ մասնավոր հատվածի ներդրումները խրախուսելու նպատակով:
 - Բարձրացնել պետական - մասնավոր գործընկերությունների դերը:
 - Լուծել մասնագետների պակասի խնդիրը՝ հատուկ մասնագիտական ուսումնական ծրագրերի միջոցով:
 - Ձարգացնել ջրային կառավարման կառույցների կարողությունները՝ ջրի որակի համակարգերի կիրառման, շահագործման և վերահսկման նպատակով:
 - Ստեղծել ջրային կառավարման մասնագիտացված ուսումնական կենտրոն:
 - Լուծել ջրային կառավարման ոլորտում կադրային շրջանառության և փորձագետների պակասի խնդիրը:
 - Բարեփոխել կրթական ծրագրերը՝ իրականացնելով շրջակա միջավայրի և ջրային կառավարման վերաբերյալ վերապատրաստումներ:
 - Ընդլայնել համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ՝ նոր մեթոդաբանությունների ներմուծման և լավագույն փորձի կիրառման նպատակով:

6 Հավելված 2. Վրաստանի զեկույցի վերաբերյալ առաջարկություններ

Բնակարանային անվտանգությունը, կլիմայական դիմադրողականությունն ու մարդու իրավունքների պաշտպանությունը ապահովելու նպատակով Վրաստանը պետք է առաջնահերթություն տա ինտեգրված քաղաքականության մշակմանը, այդ թվում՝ Աղետների ռիսկի նվազեցման (DRR) և Կլիմայական փոփոխության հարմարվողականության (CCA) իրավական շրջանակների կատարելագործմանը, իրավահեն էկոմիգրացիայի վերաբնակեցման ծրագրերին և բազմաոլորտ համագործակցությանը: Քաղաքաշինության և հողօգտագործման պլանավորման, ենթակառուցվածքների դիմադրողականության, ջրային կառավարման, ռիսկերի գնահատման և աղետներին պատրաստվածության բացերը հաղթահարելու համար անհրաժեշտ է ներառական մոտեցում՝ ներգրավելով պետական մարմիններին, քաղաքացիական հասարակությանը, համայնքային կազմակերպություններին, մասնավոր հատվածին և այլ դերակատարների: Երկարաժամկետ հարմարվողականությունն ու սոցիալական պաշտպանությունն ապահովելու նպատակով բարեփոխումներ իրականացնելիս պետք է առաջնորդվել աղետների ռիսկի նվազեցման իրավահեն ռազմավարությունների և խոցելի խմբերի համար թիրախավորված աջակցության վրա:

6.1 Ընդհանուր քաղաքականության մշակում

- Մշակել համապարփակ բնակարանային քաղաքականության ռազմավարություն և գործողությունների ծրագիր՝ ապահովելու համար պատշաճ բնակարանի իրավունքը՝ ներառելով կլիմայական հարմարվողականության միջոցառումներ, այդ թվում՝ դիմացկուն շինարարական ստանդարտների սահմանում և արտակարգ իրավիճակներին արձագանքելու պատրաստվածություն, ինչպես նաև ապահովելով պատշաճ բյուջետավորում սոցիալական բնակարանային ծրագրերի համար, որոնք ուղղված են խոցելի համայնքներին և էկոմիգրանտների վերաբնակեցման ծրագրերին: [Տնտեսության և կայուն զարգացման նախարարություն, Շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարություն, Բոնագաղթված անձանց, աշխատանքի, առողջապահության և սոցիալական հարցերի նախարարություն, համայնքներ, քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված]
- Թարմացնել 2022–2030 թթ. Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունը՝ հստակ ներառելով բնակարանային իրավունքները՝ դրույթներով, որոնք վերաբերում են կլիմայական հարմարվողականությանը, աղետների ռիսկի նվազեցմանը (DRR) և բնակարանի հասանելիությանը տեղահանվածների ու խոցելի խմբերի անձանց համար: [Վրաստանի կառավարություն, հասարակական կազմակերպություններ, իրավաբան-փորձագետներ]:

6.2 Տարածաշրջանային առանձնահատկություններ

- Իրականացնել խոցելիության գնահատում բարձր ռիսկային գոտիներում և ոչ ֆորմալ բնակավայրերում ապրող բնակչության համար՝ Էկոմիգրացիոն քաղաքականություններին և կլիմային հարմարեցված բնակարանային ծրագրերի ուղղորդման նպատակով: [Շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարություն, Արտակարգ իրավիճակների կառավարման ծառայություն, Ազգային վիճակագրական ծառայություն, ակադեմիական հաստատություններ]
- Մշակել տարածաշրջանային կլիմայական հարմարվողականության ծրագրեր Ռաչա-Լեչխումիի, Քվեմո Քարթլիի, Կախեթիի և Սցխեթայի համար՝ ներառելով բնակարանային դիմադրողականություն, հեղեղների վերահսկում և երաշտի կառավարման ռազմավարություններ: [Շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարություն, Տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն, Տնտեսության և կայուն զարգացման նախարարություն, համայնքներ]
- Մշակել Էկոմիգրացիայի իրավական շրջանակ՝ հստակ կարգավիճակ, ընթացակարգեր, իրավունքներ, երաշխիքներ, կայուն վերաբնակեցում և տնտեսական ինտեգրում, պատասխանատու մարմիններ, նրանց դերերն ու համակարգումը ապահովելու համար: [Բոնագաղթված անձանց, աշխատանքի, առողջապահության և սոցիալական հարցերի նախարարություն, Տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն, իրավաբան-փորձագետներ, ՀԿ-ներ]
- Ներառել բնության վրա հիմնված լուծումներ (լանջերի կայունացում բուսականության միջոցով, ճահիճների վերականգնում և գետափնյա գոտիների վերականգնում, ագրոանտառային պրակտիկա՝ ծառերի և մշակաբույսերի ինտեգրմամբ հողապաշտպան միջոցառումների իրականացում) սելավների և հեղեղների ռիսկերը մեղմելու նպատակով, ինչը կնպաստի, որ վտանգի գոտիներում բնակարանաշինությունը համապատասխանի կլիմային հարմարեցված քաղաքաշինական նորմերին: [Շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարություն, Տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն, համայնքներ, ակադեմիական և հետազոտական հաստատություններ, մասնավոր հատված և համայնքային կազմակերպություններ]
- Ուժեղացնել ջրային պաշարների կառավարումը Մտկվարի-Արաքսի ավազանում՝ ներառյալ սահմանային համագործակցությունը, ապահովելով բնակարանային դիմադրողականություն երաշտի նկատմամբ խոցելի շրջաններում: [Շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարություն, Տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն, համայնքներ]:

6.3 Բնակելիություն

- Կիրառել կլիմայական պայմաններին դիմակայուն շինարարական ստանդարտներ՝ այդ թվում ուժեղացնելով շինարարական նորմերը և վերակառուցման քաղաքականությունները ու դիմացկունության վերահսկողությունը՝ բնակարանների ամրությունը բարձրացնելու համար, մասնավորապես խրախուսելով դիմացկուն նյութերի, էկո-խելացի բնակարանային լուծումների և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների օգտագործումը: [Տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն, համայնքներ]
- Բարելավել օդերևութաբանական տվյալների հավաքագրումը և վտանգավոր եղանակային երևույթների մոդելավորումը՝ առավել ճշգրիտ կանխատեսելու համար բնակարանային կայունության վրա ազդող վտանգները: [Ազգային շրջակա միջավայրի գործակալություն, ակադեմիական և հետազոտական հաստատություններ]
- Հիմնվել լավագույն փորձի վրա. ինստիտուցիոնալացնել հաջողված պիլոտային ծրագրերը, հատկապես գյուղական ջրամատակարարման համակարգերի արդիականացման ուղղությամբ, ներառել տվյալ կլիմայական պայմաններում դիմացկուն ենթակառուցվածքներ ազգային բնակարանային քաղաքականության մեջ: [Տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն, Շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարություն]

Մշակել սոցիալական բնակարանների նվազագույն չափորոշիչներ՝ հստակեցնելով տեղանքի, մատչելիության, բնակելիության, մատչելիության, էներգաարդյունավետության և աղետների նկատմամբ դիմադրողականության պահանջները: [Վրաստանի կառավարություն, համայնքներ, քաղաքացիական, հասարակական գործիչներ]

- Ստեղծել կարողությունների զարգացման ծրագիր, որը կներառի կլիմայական պայմաններին դիմացկուն բնակարանաշինության, կայուն քաղաքային պլանավորման լավագույն միջազգային փորձը և հարմարվողականության ռազմավարությունները՝ ներառյալ բնական աղետների նկատմամբ դիմացկուն բնակարանային շինարարության ավանդական մեթոդները: [Տնտեսության և կայուն զարգացման նախարարություն, Շրջակա միջավայրի պաշտպանության և գյուղատնտեսության նախարարություն, Տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն, համայնքներ, մասնավոր ընկերություններ, ակադեմիական հաստատություններ, ՀԿ-ներ]:

6.4 Ծառայությունների, նյութերի, կառույցների և ենթակառուցվածքների մատչելիություն

- Արագացնել ազգային բազմբնույթ աղետների վաղ արձագանքման համակարգերի հետագա զարգացումը՝ ապահովելով համապարփակ

ռիսկերի գնահատում, բարելավված համակարգման կառուցվածք, ջրհեղեղների, սողանքների և վտանգավոր եղանակային պայմանների վերաբերյալ իրական ժամանակի ազդանշաններ, կայունության ռազմավարություն, ինչպես նաև բնակարանների պաշտպանություն աղետային գոտիներում և խոցելի իրավիճակում գտնվող մարդկանց նպատակային պաշտպանության միջոցառումներ: [Շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարություն, Արտակարգ իրավիճակների կառավարման ծառայություն, համայնքներ, մասնավոր ընկերություններ, ակադեմիական հաստատություններ, քաղաքացիական, հասարակական կազմակերպություններ, համայնքային խմբեր]

- Մշակել քաղաքականության բարեփոխումներ՝ ապահովելով, որ կլիմայական պայմաններին դիմացկուն բնակարանները ներառեն անվտանգ ջրի, սանիտարական պայմանների, թափոնների կառավարման և կայուն էներգիայի հասանելիություն հատկապես ներքին տեղահանված անձանց բնակարանային ապահովման ժամանակ [Տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն, Բոնազավթված տարածքներից ներքին տեղահանված անձանց նախարարություն, Աշխատանքի, առողջապահության և սոցիալական հարցերի նախարարություն, համայնքներ, փորձագետներ]
- Ընդլայնել բնակարանների վերանորոգման ֆինանսական և տեխնիկական աջակցությունը՝ առաջնահերթություն տալով բարձր ռիսկի գոտիներում գտնվող կլիմայական պայմանների նկատմամբ խոցելի բնակչությանը՝ հիմնվելով խոցելիության գնահատականների վրա: [Բոնազավթված տարածքներից ներքին տեղահանված անձանց նախարարություն, Աշխատանքի, առողջապահության և սոցիալական հարցերի նախարարություն, Տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն, համայնքներ]
- Ամրապնդել աղետներից տուժած տեղահանված բնակչության իրավական պաշտպանությունը՝ ապահովելով կայուն վերաբնակեցման քաղաքականություն և ներքին տեղահանված անձանց բնակավայրերը ներառելով աղետների ռիսկի նվազեցման պաշտպանության շրջանակներում: [Բոնազավթված տարածքներից ներքին տեղահանվածների նախարարություն, աշխատանքի, առողջապահության և սոցիալական հարցերի նախարարություն, քաղաքացիական հասարակություն, ԱԻՎ, տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն]
- Բարեփոխել քաղաքաշինական նորմերը՝ վտանգի ենթարկված գոտիներում նոր, ոչ ֆորմալ բնակավայրերի կառուցումը կանխելու համար՝ ապահովելով այլընտրանքային բնակարանային լուծումներ: [Էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարություն, համայնքներ]
- Աջակցել այն համայնքներին, որոնք դեռևս չեն ընդունել Արտակարգ իրավիճակների ռիսկերի կառավարման ծրագրեր, և հիմնվելով փորձի վրա՝ աղետների ռիսկերի նվազեցման համակարգում ինտեգրել բնակարանային համարժեքությունը, այդ թվում՝ տարիանման ընթացքում ժամանակավոր

կացարանների դեպքում: [Արտակարգ իրավիճակների կառավարման ծառայություն, Բռնազավթված տարածքներից ներքին տեղահանվածների նախարարություն, աշխատանքի, առողջապահության և սոցիալական հարցերի նախարարություն, քաղաքացիական հասարակություն, համայնքներ]: